

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՊՈՒՄԱՅԻ ՄԷՋ ՆԵՐԿԱՅ ԵՂԱԲ ՀԱՅԱՍՏԱՆ- ԹՈՒՐԻԱ ՄՐՑՈՒՄԻՆ

Չորեքշաբթի, Հոկտեմբեր 14-ին Սերժ Սարգսեանի ժամանելով Պուրաս քաղաքը, իր թուրք պաշտօնակից Աբդուլլա Գիլլի հետ ներկայ եղաւ Հայաստան-Թուրքիա ֆուլթայլի խաղին:

Նախքան մրցումին ներկայ գտնուելը, երկու երկիրներու նախագահները Պուրասի «Ալմիրա» հիւրանոցէն ներս իրենց ունեցած հանդիպումի ընթացքին քննարկեցին հայ-թրքական յարաբերութիւններու վերջին զարգացումները: Հայկական պատուիրակութեան մաս կը կազմէր նաեւ արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեան:

Բանակցութիւններու աւարտին թուրքիոյ նախագահը ճակերոյթով մը պատուեց Սերժ Սարգսեանն ու անոր ընկերակցող պատուիրակութիւնը: Ծաղկերոյթէն ետք, երկու նախագահները ուղեւորուեցան Աթաթուրքի անուան մարզադաշտ, ուր Երեւանի ժամանակով ժամը 23:00-ին սկսաւ ֆուլթայլի Աշխարհի Բաժակի ընտրական փուլի թուրք-իա-Հայաստան հանդիպումը:

Ինչպէս Երեւանի մէջ տեղի ունեցած առաջին խաղին, այս անգամ եւս 2-0 արդիւնքով յաղթական դուրս եկան թուրք ֆուլթայլիստները:

## ԱՆՅԱԶՈՂ ՍԿԻՋԲ ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹՈՒՐԻԱՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ՎԱԲԵՐԱՑՈՒՄԸ ԿԸ ԿԱՊԵ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ

Շաբաթ, Հոկտեմբեր 10-ին, բաւական դժուարութիւններէ անցնելէ ետք, Չուիցերիոյ Ջիւրիխ քաղաքի Համալսարանէն ներս ստորագրուեցան հայ-թրքական երկու Արձանագրութիւնները՝ դիւանագիտական յարաբերութիւններ վերահաստատելու եւ երկու երկիրներու միջեւ սահմանը բանալու նպատակով: Սակայն, ստորագրութեան մելանը չչորցած, թրքական կողմը սկսաւ առաջ մղել իր պայմանները, որոնցմէ գլխաւորը՝ «Ատրպէյճանի գրաւեալ տարածքներէն» հայկական զօրքերու հեռացումը:

Արդարեւ, Արձանագրութիւններու ստորագրման յաջորդ օրն իսկ, հանդէս գալով իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան ժողովէն յետոյ, թուրքիոյ վարչապետ Ռէժեփ Թայիփ Էրտողան յայտարարեց, որ իրենք չեն վաւերացներ Ջիւրիխի մէջ ստորագրուած հայ-թրքական Արձանագրութիւնները, քանի դեռ հայկական զօրքերը դուրս չեն բերուած Ատրպէյճանի «գրաւեալ» տարածքներէն:

«Հայ-թրքական սահմանը կը բացուի միայն Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան վե-



րական գնումէն ետք», - ըսած է Էրտողան:

Այս խօսքերը կը ծրագրէր հնչեցնել նաեւ թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմէտ Դավութոյլուն, ստորագրութեան յաջորդելիք իր խօսքին մէջ: Սակայն, հայկական կողմի առարկութիւններուն պատճառաւ, Արձա-

նագրութիւններու ստորագրումը կատարուեցաւ 3,5 ժամ ուշացումով: Աշխարհի գլխաւոր պետութիւններու եւ կառույցներու դեկավարները ժամեր շարունակ փորձեցին համոզել կողմերուն՝ կատարել իրենց յանձնարարութիւնները

Շաբ.ը էջ 4

## «ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ ՎԱՐՉԱԽՄԲԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՊԱՑՈՅՑՆ Է»

Հոկտեմբեր 12-ին հրապարակուած յայտարարութեամբ մը Հայ Ազգային Գոնկրէսը, որ կը գլխաւորէ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան, եկաւ յայտարարելու թէ Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններու ստորագրումը իշխող վարչախումբի քաղաքական սնանկութեան եւ դիւանագիտական խեղճութեան հերթական ցաւալի ապացոյցն է:

«Ցիւրիխեան ուրացման գործարքով Հայաստանի վարչախումբը նպատակ ունէր հասնել հայ-թուրքական սահմանի բացմանը՝ դրա դիմաց վճարելով պատմական փաստերն ուսումնասիրող տիրահաշակ յանձնաժողովի գաղափարի ընդունմամբ, դրանով իսկ՝ աշխարհի առջեւ կասկածի տակ դնելով Հայոց ցեղասպանութեան պատմական իրողութիւնը: Անգամ ինքնին անբարոյ ու անթոյլատրելի այս գործարքը Հայաստանի սպասելիքի մասով չիրականացաւ: Խորհրդարանների վաւերացումից անկախ, թուրքիան արդէն իսկ ստացել է իր ուզածը: Մինչդեռ, ինչպէս մինչեւ փաստաթղթերի ստորագրումը, այնպէս էլ դրանից յետոյ, թուրքիան ամենաբարձր մակարդակով շարունակում է պետական սահմանների բացման հարցը պայմանաւորել Լեւոնային Ղա-

րաբաղի ինդրով, մասնաւորապէս՝ անվտանգութեան գոտի հանդիսացող տարածքների վերադարձմամբ:

«Անխուսափելի այս ընթացքի մասին Հայ Ազգային Գոնկրէսն անազանգում է մէկ տարի շարունակ՝ զգ ուշացնելով, որ պատմաբանների յանձնաժողովի ստեղծման գաղափարին Սերժ Սարգսեանի տուած հաւանութիւնից յետոյ հայ-թուրքական յարաբերութիւնների եւ դարաբաղեան կարգաւորման խնդիրները ներառուելու են մէկ փաթեթի մէջ»:», ըսուած է ընդդիմադիր համախմբումի յայտարարութեան մէջ:

«Հայ-թուրքական արձանագրութիւնների ստորագրումը հետեւանք է վերջին տասը տարիների ընթացքում Ռ. Քոչարեանի եւ Ս. Սարգսեանի վարած քաղաքականութեան, որի պատճառով երկրում ստեղծուեց քրէաօլիգարխիկ, կոռուսայացուած համակարգ, իսկ Ցեղասպանութեան հարցն ընդգրկուեց արտաքին քաղաքականութեան օրակարգ՝ այդ դարձնելով քաղաքական սակարկութեան առարկայ: Չունենալով ժողովրդի աջակցութիւնը եւ իր յենարանը փնտռելով միջազգային հանրութեան շահերն սպասարկելու մէջ՝ Ս. Սարգսեանի

Շաբ.ը էջ 4

## ՍԴՅԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Սոցիալ - Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ահագանգերը՝ ուղղուած հայթորակեան երկկողմ յարաբերութիւնների եւ արդէն իսկ ստորագրուած արձանագրութիւնների վերաբերեալ, այդպէս էլ մնաց գործող վարչախմբի համար անմրոնելի, եւ հետեւանմանի խայտառակ ընթացքը՝ անխուսափելի:

Ստորագրուած արձանագրութիւնները իրենց բովանդակութեամբ եւ կատարուած փաստով խօսում են Հայաստանի իշխանութիւնների քաղաքական սնանկութեան, անհեռատեսութեան եւ դիւանագիտական խայտառակ պարտութեան մասին: Թրքական դարերէն եկող դիւանագիտական հմուտ ցեղութիւնը հերքական յարաբերակը գրանցեց Հայաստանի ապօրինի իշխանութիւններին, սակայն ո՛չ հայ ժողովրդի արթուն մտքի նկատմամբ:

1. Թուրքիան ստացաւ այն, ինչ ուզում էր:
2. Հայաստանի իշխանութիւնները՝ այն, ինչին արժանի էին:
3. Հայ ժողովուրդն ու Հայաստանը, չստացաւ ոչինչ, բացի ցեղասպանութեան ուրացումից:
4. Այս արձանագրութիւնների արդիւնքում, ապագայում Արցախի հայութիւնը կը մնայ անպաշտպան:
5. Թուրքիան հարաւային Կովկասում կը ստանայ գերակայող դիրք:

Մայր կուսակցութիւնը իր ստեղծման պահից ի վեր շուրջ 122 տարի պայքար է մղել յանուն ազգային շահերի, Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանի երանելի միաւորման, միջազգային ատեաններում յամառ եւ հետեւողական պայքար է տարել ցեղասպանութեան ցանաչման համար:

Սոցիալ - Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը յայտարարում է՝ երբեք չի համակերպուի այս արձանագրութիւնների խայտառակ, ապագային բովանդակութեան հետ:

Հայ-թուրքական յարաբերութիւնների հաստատման նմանօրինակ բովանդակութիւնն ու ընթացքը համարում ենք դաւանանքիւն հայ ժողովրդի եւ Հայոց պետականութեան նկատմամբ:

**Սոցիալ - Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան  
Հայաստանի վարչախումբին**



ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՕՐՈՒԱՆ ԸԱՐՅԵՐՈՒՆ ԸԵՏ

ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱ ԱՐԺԱՆԻ Է ՆՈՊԵԼԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԻՆ

Գ. ԽՈՏԱՆՆԱՆ

Այս տարուայ Նոպելեան խաղաղութեան Մրցանակը շնորհուրեցաւ Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամային: Շուէտի Գիտութիւններու Արքայական Ակադեմիայի կողմէ առնուած որոշումը անակնկալ էր բոլորի համար ու առաջին հերթին նոյնինքն Օպամային: Շատեր հարց կու տան, թէ ինչպէ՞ս կրնայ պատահիլ, որ հազիւ նախագահ դարձած անձ մը կ'արժանանայ Նոպելեան Մրցանակի:

Այս բարձր պատիւի մասին տեղեկանալէ ետք, իր առաջին յայտարարութեան մէջ Ամերիկայի նախագահը սովորականին նման համեստ էր: Իրերը գնելով իրենց տեղը, ան յայտնեց թէ, ինք կը գիտակցի որ խաղաղութեան Մրցանակը շնորհուած է իրեն, ոչ թէ կատարած իրագործումներու համար, այլ կողք մըն է ապագայ գործողութիւններու:

Այսպիսով Պարաք Օպամա ինքզինք ու իր ղեկավարած երկիրը դրաւ նոր պարտաւորութիւններու տակ, ուր Միացեալ Նահանգները պէտք է հեռու մնայ ուժի գործածութեամբ ամէնուրեք իր կամքը պարտադրելու քաղաքականութենէն ու իրարհասկացողութեան ձեռք երկարէ բարեկամներուն ու թշնամիներուն հաւասարապէս:

Պարաք Օպամայի նախորդ՝ ձորճ Պուշի իր վարած արտաքին ծաւալապաշտական քաղաքականութեամբ Ամերիկան հասցուց անդունդի եզրին, վարկաբեկելով այն բոլոր սկզբունքները, որոնց վրայ կառուցած էր այս գերհզօր երկրի միջազգային վարկը: Իրաքի պատերազմի գործած աւերները ու հարիւր հազարաւոր զոհերը, ահաբեկչութեան դէմ պայքարի անուան տակ մարդկային իրաւունքներու բռնաբարոյնները, Կուանթանամոյի եւ Ապու Ղրէպի բանտերը, արեւելեան Եւրոպայի մէջ հաստատուած գաղտնի մեկուսարանները, ձերբակալուածներու դէմ անմարդկային վերաբերմունքը, նոյնինքն ամերիկացիներու դէմ գաղտնալստումները յատկանշեցին տգեղ դիմագիծը պահպանողականներու իշխանութեան, որու համար նպատակը կ'արդարացնէր միջոցը, նոյնիսկ Ամերիկայի Սահմանադրութիւնը ոտնահարելու գնով:

«Փոփոխութիւն» կարգախօսին տակ ընտրուելով նախագահ, Պարաք Օպամա իր նախորդէն ժառանգեց հսկայ բեռ մը, որմէ ձերբազատուելու համար իր պաշտօնավարութեան առաջին ինը ամիսները անբաւարար էին: Շատ աւելի երկար ժամանակ է պէտք, որպէսզի Օպամա կարողանայ վերահաստատել կորսուած վստահութիւնը՝ աշխարհի ժողովուրդներուն ու Ամերիկայի միջեւ: Այսուհանդերձ, բաւական լուրջ, մտածուած ու գործնական քայլեր առնուած են արդէն:

Իրաքեան թատերաբեմէն ամերիկեան զօրքերը դուրս բերելու գործընթացը սկսելէ ետք, Թուրքիոյ խորհրդարանէն ու Գահիրէի համալսարանէն ներս իր ունեցած երկու պատմական ելույթներով, Օպամա պատուհան բացաւ իսլամական աշխարհին ու յատկապէս անոր ժողովուրդներուն: Երկիսուութեան մէջ մտնելով անոնց հետ, ան կարողացաւ դանդաղեցնել ծայրայեղականութեան յառաջդրուած ըսելու թէ, Միացեալ Նահանգները խաչակրական պատերազմի մէջ է իսլամութեան դէմ եւ թէ, ահաբեկչութեան ամենէն աւելի կը տուժեն ու մեծ թիւով զոհեր կու տան առաջին հերթին մահմետական կրօնքի հետեւորդները:

ձորճ Պուշի վարչակարգը Ռուսաստանի հետ վարեց պաղ պատերազմը չիշեցնող անխոհեմ քաղաքականութիւն մը, որ չէր կրնար նպաստել աշխարհի խաղաղութեան եւ ընդհակառակը, կը վնասէր առաջին հերթին, Ամերիկայի շահերուն: Պարաք Օպամա իրատես մօտեցումով մը եկաւ վերջակէտ դնելու արեւելեան Եւրոպայի մէջ հակահրթիւնային պաշտպանութեան համակարգի մը տեղադրման ծրագրին, որ կ'արժանանար Ռուսաստանի բռն ընդդիմադրութեան ու կը սպառնար ռազմական նոր մագլցումներ յառաջ բերել Եւրոպական ցամաքամասին վրայ:

Օպամայի առած քայլով ոչ միայն յատկութիւն մտաւ Ռուսաստանի հետ յարաբերութիւններուն մէջ, այլ նաեւ կարելի եղաւ ապահովել անոր նեցուկը, բազմաթիւ այլ վտանգաւոր վայրերու մէջ: Այսուհետեւ Միացեալ Նահանգները կրնայ ապահովել Ռուսաստանի օժանդակութեան՝ իրանի միջուկային ծրագիրներու կասեցման, աֆղանեան պատերազմի եւ միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարի ուղղութեամբ:

Այժմ, Պարաք Օպամա իր սեղանին ունի դժուարագոյն թղթածրար մը եւս, իսկ խաղաղութեան մրցանակը կու գայ զինք դնելու մեծ երկընտրանքի մը առջեւ: Կասկած չկայ որ, Աֆղանիստանի պատերազմը, ի տարբերութիւն իրաքեանի, պարտադրուած պատերազմ մըն է: Ամերիկեան զօրքերը հոնկէ քաշուելու պարագային կը տապալի այդ երկրի կառավարութիւնը ու աշխարհի ամենայնտող վարչակարգը՝ Թալիպաններու շարժումը կը վերադառնայ իշխանութեան ու իր հետ կը վերադառնան նաեւ աշխարհի բոլոր «պընյատենները»: Միւս կողմէ, Յաւելեալ զօրքեր ուղարկելով ու ընդլայնելով պատերազմական գործողութիւնները, Օպամա հարցականի տակ կը դնէ իր խաղաղասիրական համբաւը: Ան ներկայիս կը գտնուի նման դժուար որոշումի մը առջեւ:

Յարգ կատարած քայլերը քաջալերելու եւ զինք աւելի յանդուգն նախաձեռնութիւններու մղելու համար է որ, Պարաք Օպամային շնորհուրեցաւ խաղաղութեան Նոպելեան Մրցանակը, որուն արժանի է ան, որպէս եզակի մարդ մը, որ կը ձգտի կառուցելու աւելի արդար աշխարհ մը՝ երկրագունդի բոլոր ժողովուրդներուն համար:

ԶԺՊՏԱՑՈՂ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՏԳԱՍԸ



ԱՆԻՐԱՆԻԿ ԹԵՒԱՆՆԱՆ

Հայ-թուրքական արձանագրութիւնները ստորագրման շուրջ տեղի ունեցող ոգիսականը եւս մէկ անգամ ապացուցում է, որ «Ֆուտբոլային» կոչուած խաչատառակ դիւանագիտութեան հետեւանքով, Թուրքիան ակտիվօրէն միտնուել է Արցախի խնդրի կարգաւորման գործընթացի մէջ:

Ստորագրման արարողութիւնը յետաձգուեց, քանի որ թուրքական կողմը որոշել էր յայտարարութեամբ հանդէս գալ, ուր շօշափուելու էր Արցախի հարցը: Հայկական կողմը դրան հակադրել էր Հայոց ցեղասպանութեան շեշտադրման սպառնալիքով, եւ արդիւնքում կողմերը որոշել են ընդհանրապէս հրաժարուել ստորագրմանը յաջորդող հակիրճ զեկուցումից:

Այս ամէնը ցոյց է տալիս, որ բոլոր այն հայ պաշտօնեաները, ովքեր հաւաստիացնում էին, թէ հայ-թուրքական գործընթացը տարանջատուած է Արցախի հարցից, մեղմ ասած ստույգ էին եւ մոլորեցնում մեր հանրութեանը: Դավութօղլուն Յիւրիխում հասկացրեց մեզ ու «Հասկացողներին», որ էրդողանի յայտարարութիւններն Արցախի մասով բնաւ էլ ներքին օգտագործման համար չեն:

Մի՞թէ, պարզ չէր, որ եթէ թուրքերը համաձայնում են չանել իրենց յայտարարութիւնը Յիւրիխում, ապա դա կ'անեն արձանագրութիւնների ստորագրմանը յաջորդող բոլոր օրերին ու ամէն առիթով: Մի՞թէ, պարզ չէր, որ թուրքական խորհրդարանը չի վաւերացնելու արձանագրութիւնները, մինչեւ Արցախի հարցում «առաջխաղացում» չարձանագրուի: Ու այդքանից յետոյ հայկական կողմը չի հրաժարուել արձանագրութիւնը ստորագրելուց: Դա, կը ներէք, արդէն առնուազն դիւանագիտական անմեղսունակութիւն է, եթէ այլ որակում չտանք: Ստացուած է, որ մենք հիմա Թուրքիայի ձեռքը տուեցինք բոլոր խաղաքարտերը եւ սպասելու ենք, դառնալով պասիւ դիտորդ:

Նախարար Նալբանդեանի դէմքի «պատի գոյն» ու իր թուրք գործընկերոջ անհոգ ժպիտը, կողմերի տրամադրութեան իրական արտացոլումն էր: Հեռուստատեսիւնի առաջ նստած պարզապէս չէի նախանձում մեր արագործնախարարին: Նրա դէմ-

քի արտայայտութիւնը իւրօրինակ պատգամ էր հայ ժողովրդին, որ գործերը լաւ չեն:

Զգուցացող նախարարի դէմքը չուշում էր, որ հիմա գործընթացները զարգանալու են վատթարագոյն սցենարով: Այնպէս, ինչպէս մենք կանխատեսել էինք շատ վաղուց:

Փաստօրէն, իշխանութիւնը չօգտագործեց վերջին շանսը, որն ակամայից տուեցին մեզ թուրքերը Յիւրիխում եւ ստորագրեց արձանագրութիւնը: Հետեւաբար, բացասական զարգացումների դէմն առնելու միայն մէկ տարբերակ մնաց, իշխանափոխութիւնը: Իշխանափոխութիւնն արդէն ազգային անվտանգութեան ապահովման միակ միջոցն է մնացել: Այլընտրանք չկայ:

« 7 Օր »

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Յեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104



ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՀԱՆ ՇԻՐԻՍԱՆԵԱՆ. «ՄԵՆՔ ԱՅՍՕՐ ԱՅՄՊԻՍԻ ՎԻՃԱԿՈՒՄ ՉԵԻՆՔ ԼԻՆԻ, ԵԹԵ ՉԼԻՆԵՐ»

«7 ՕՐ»: Ես գտնում եմ, որ մենք այսօր այսպիսի վիճակում չէինք լինի, եթէ չլինէր Հոկտեմբերի 27-ը: Այսօր արդէն առանց որեւէ կասկածի կարող ենք ասել, թէ ում էր պէտք Հոկտեմբերի 27-ը. անգլո-սաքսոնական ուժերին, որ Հայաստանին դարձնեն թոյլ, գիշորական եւ պարտադրեն այսպիսի լուծում:



Հիմա ամբողջ ինդիբը Երեւան-Անկարա-Նախիջեւան-Բաքու երկաթուղին աշխատացնելը եւ ցամաքային կապ ստեղծելն է, եւ մենք գնում ենք այդ ինդիբի լուծմանը մեր բարի կամքով, որը ես համարում եմ անթոյլատրելի: Վաղը դա բերելու է Ղարաբաղեան գործընթացի արագացման, «Հայելի» ակումբում ասել է ՄԴՀԿ Կենտրոնական վարչութեան անդամ Վահան Շիրիսանեանը:

Վահան Շիրիսանեան (աջից) եւ Համլետ Յարութիւնեան բանավէճի ընթացքին. Կեդրոնը համադրողը

Մենք ի սկզբանէ դէմ ենք եղել Թուրքիայի հետ որեւէ յարաբերութեան ստեղծմանը, վերականգնմանը, քանի դեռ Թուրքիան չի ընդունել Յեղասպանութիւնը, ասել Շիրիսանեանը:

Մատասխանելով Վահան Շիրիսանեանի նման յայտարարութիւններին, նոյն ակումբի հիւր Աժ ՀՀԿ խմբակցութեան անդամ Համլետ Յարութիւնեանն ասել է, որ զարմանում է Վահան Շիրիսանեանի, հայ-թուրքական յարաբերութիւնների վերաբերեալ այդքան կտրուկ հայեացքներ ունենալուց: Նրա կարծիքով ստորագրուած արձանագրութիւնները միակ փաստաթուղթն են, որ Հայաստանը Թուրքիայի հետ ստորագրել է որպէս իրաւագոր պետութիւն: Մնացած բոլոր պայմանագրերը, կարս, Ալեքսանդրապոլ եւ այլն, Հայաստանի համար ստորագուելիս եւ վիրաւորական են եղել:

Արձանագրութիւնների քաղաքական վնասներից խօսելիս նա ասել է, որ դրանց պատճառով Հայաստանը կորցնում է Սփիւռքը, հայ-ուսական եւ հայ-իրանական յարաբերութիւնները:

Հակազդելով Հ. Յարութիւնեանին, Վահան Շիրիսանեանն ասել է, թէ ցաւում է, որ Հ. Յարութիւնեանն այսօր, «լինելով Հայաստանի հանրապետական կուսակցութեան անդամ, որը Նժդէհից շեղուել, գնացել է լեւին, ստիպուած է պաշտպանել մի փաստաթուղթ, որն ամբողջ հայութեան դէմ է»:

Հայաստանն իր անկախ գոյութեան տարիներին ունեցել է չորս յաղթանակ, Սփիւռքը, Յեղասպանութիւնը, ուսական բազան եւ Արցախը: Սրանք ճիշդ օգտագործելու ժամանակ կարող էինք ունենալ շատ աւելի մեծ յաջողութիւններ, բայց ոչ այս վիճակը: Այս յար-

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՈՒԵԼ Է «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ԱՆՈՒԱՍԲ ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ



Վարդան Խաչատրեան, Ժիրայր Սէֆիլեան եւ Տիգրան Խզմալեան կը յայտարարեն «Սարդապատ» շարժումի ստեղծումը

«ԹԵՐԹ»: Հոկտեմբեր 13-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ Աժ պատգամաւոր Վարդան Խաչատրեանը, «Միացում» նախաձեռնութեան համակարգող Ժիրայր Սէֆիլեանը եւ կինոռեժիսոր Տիգրան Խզմալեանը տեղեկացրել են, որ իրենց նախաձեռնութեամբ ստեղծուած է նոր շարժում, որը կրում է «Սարդապատ» անունը:

րենիքում եւ արտերկրում: Նախաձեռնող խմբի անդամները սրանով յայտ են ներկայացնում ծառայել ու առաջնորդել մեր ժողովրդին այս ճանապարհին:

«Այսօր կրկին, ինչպէս բազմիցս պատահել է մեր պատմութեան ընթացքում, հայրենիքը վտանգուած է: Այժմ հայոց միջնաբերդին սպառնում է ոչ թէ օտար բանակը կամ հարեանների դաւադրութիւնը, այլ սեփական իշխանաւորները, նրանց կուրացնող իշխելու տենչն ու անյազ ընչաքաղցութեան: Հայրենակիցներ նման սպառնալիքներին դիմակայելու ունակութիւն մեր ժողովուրդը վառ կերպով դրսեւորել է 91 տարի առաջ, Սարդապատի բախտորոշ օրերին: Մենք յայտարարում ենք, որ հայ ժողովրդի փրկութեան բանաձեւը դա Սարդապատի անպարտելի ոգու վերահաստատումն է Հայաստանում: Սա է հայոց պատասխանը դարերով շահարկուող հայկական հարցին», ասուած է «Սարդապատ» շարժման նախաձեռնող խմբի յայտարարութեան մէջ:

«Իրաւունք դե-ֆակտո» մասուլի ակումբում նորաստեղծ «Սարդապատ» շարժման նախաձեռնող խմբի անդամ Ժիրայր Սէֆիլեանը, խօսելով իրենց շարժման նպատակների մասին, ասաց, որ գլխաւոր նպատակն է ունենալ մի Հայաստան, որտեղ իշխելու է բարոյակամութիւնը, արդարութիւնը, հաստատանակներու թիւնը:

Նրանք նաեւ կոչ են անում իրենց «վերկուսակցական շարժմանը գինուորագրուել բոլոր ազնիւ եւ նուիրեալ հայրենակիցներին», հայ-թուրքական յարաբերութեան վերաբերելիս, որեւէ յարաբերութեան ստեղծմանը, որը կարող էր դատաւորը կայացնել՝ քրէական գործը կարճելու որոշումն էր: Քրէական գործի նիւթերն ապացուցում են, որ Նիկոլ Փաշինեանը քրէօրէն պատժելի որեւէ արարք չի կատարել», ասել է Վարդանեանը: Ի դէպ, Մացոն մինչեւ այդ արդէն ապօրինութիւն է գործած եղել՝ Նիկոլ Փաշինեանի գործը վարոյթ ընդունելիս: Նա գործը վարոյթ ընդունելիս չի սահմանել այն ժամկէտը, որի ընթացքում քաղաքատարկելի փաստաբանները պէտք է իրենց միջնորդութիւնները ներկայացնէին: ՀՀ քրէական դատաւարութեան օրէնսգիրքը մինչեւ 15-օրեայ ժամկէտ է նախատեսում՝ դատարան ուղարկուած գործի վերաբերեալ միջնորդութիւններ ներկայացնելու համար:

Ժիրայր Սէֆիլեանը անդրադարձել է նաեւ Հայ Ազգային կոնգրեսում իր անդամակցութեան մասին, նշելով, որ իրենք օջակցել են Տէր-Պետրոսեանին, սակայն իրենք միշտ իրենց տարաձայնութիւնները բարձրաձայնել են եւ ասել են, որ երկար ժամանակ չեն կարող ձեռքները ծալած նստել, իսկ այժմ ժամն է եկել գործելու:

«Այդ դաշտը, որ Տէր-Պետրոսեանը գլխաւորել է, ղեկավարել է եւ այդ դաշտում պայքարել է այս բռնատիրական ուժի դէմ 1,5-2 տարի ամենամանկեղծ ձեռով, մենք այդ դաշտից երբեք դուրս եկողը չենք», ասել է Վարդան խաչատրեանը, խօսելով նորաստեղծ «Սարդապատ» շարժման մասին, ասաց, որ ինչպիսին կը լինի ժողովրդի կամքը, այդպիսին կը լինի շարունակութիւնը:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԴԱՏՈՒ ԴՈԿՏԵՄԲԵՐ 20-ԻՆ

«Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր, քաղաքատարկեալ Նիկոլ Փաշինեանի դատաւարութիւնը կը մեկնարկի Հոկտեմբերի 20-ին: Դատը կը սկսուի ժամը 12.00-ին, Շենգաւիթ համայնքի ընդհանուր իրաւասութեան դատարանի յատուկ կահաւորուած դահլիճում, որտեղ քաղաքացիների եւ դատաւարութեան մասնակիցների համար նախատեսուած մասերը իրարից բաժանուած են գրահասպատ ապակիով: Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրաւասութեան դատարանի դատաւոր Մնացական Մարտիրոսեանը, ով Նիկոլ Փաշինեանի գործով դատաւորն է, դատական նիստ նշանակելու որոշումը կայացրել է Հոկտեմբերի 12-ին: Նա, միաժամանակ, որոշել է անփոփոխ թողնել Նիկոլ Փաշինեանի նկատմամբ ընտրուած խափանման միջոցը՝ կալանքը: «Հժ» գլխաւոր խմբագրի փաստաբաններ Լուսինէ

Սահակեանը եւ Երուանդ Վարոսեանը ասել են, որ դատաւորի նման որոշումը ակնյայտ ապօրինի է: «Միակ օրինական որոշումը, որը կարող էր դատաւորը կայացնել՝ քրէական գործը կարճելու որոշումն էր: Քրէական գործի նիւթերն ապացուցում են, որ Նիկոլ Փաշինեանը քրէօրէն պատժելի որեւէ արարք չի կատարել», ասել է Վարոսեանը: Ի դէպ, Մացոն մինչեւ այդ արդէն ապօրինութիւն է գործած եղել՝ Նիկոլ Փաշինեանի գործը վարոյթ ընդունելիս: Նա գործը վարոյթ ընդունելիս չի սահմանել այն ժամկէտը, որի ընթացքում քաղաքատարկելի փաստաբանները պէտք է իրենց միջնորդութիւնները ներկայացնէին: ՀՀ քրէական դատաւարութեան օրէնսգիրքը մինչեւ 15-օրեայ ժամկէտ է նախատեսում՝ դատարան ուղարկուած գործի վերաբերեալ միջնորդութիւններ ներկայացնելու համար:

ՄԴՀԿ «ՍԱՐԳԻՍ ՏԻՐՈՒՆԻ» ՄԻՈՒԹԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏ

ՄԴՀԿ «Սարգիս Տիրունի» ուսանողական-երիտասարդական միութեանը ուսանողների շրջանում անցկացրել է սոցհարցումներ, պարզելու նրանց տեղեկացուածութեան աստիճանն ու դիրքորոշումը հայ-թուրքական յարաբերութիւնների վերաբերեալ:



Ինչպէս «Հայեացք» մամուլի ակումբում յայտարարել է միութեան անդամ Նարեկ Գալստեանը, հարցմանը մասնակցած ուսանողների շուրջ 68%-ը հետաքրքրուած է հայ-թուրքական յարաբերութիւններով, բայց ընդամէնը 47%-ն է հետեւել ողջ գործընթացին:

ՄԴՀԿ «Տիրունի» միութեան անդամներ Գեորգ Բերբուրէկեան (ձախից) եւ Նարեկ Գալստեան մամուլայատու լիսի ընթացքին

Հարցմանը մասնակից ուսանողների շուրջ 71%-ը նշել է, որ վարուող քաղաքականութիւնը իրենց բոլորովին չի գոհացնում, 18%-ը դժուարացել է պատասխանել, եւ ընդամէնը 10%-ը նշել է, որ գոհ է գործընթացից, ասել է նա: Նարեկ Գալստեանը նաեւ տեղեկացրել է, որ հարցումների մասնակից-

ների 42%-ը նշել է, թէ այս կերպ վարած քաղաքականութիւնը կարող է առիթ տալ, որ Ղարաբաղի հիմնախնդրի լուծման հետագայ ընթացքը անդառնալի հետեւանքներ ունենայ: Իսկ հարցուածների գրեթէ 95% նշել է, որ Յեղասպանութեան ճանաչման գործընթացը այսքանով կը կասեցուի:

«Այս հարցումներն արուել են մեր ջանքերով, իրականացրել են ԵՊՀ սոցիոլոգիայի բաժնում սովորող բակաւորիստի, մագիստրատուրայի եւ ասպիրանտուրայի ուսանողների», ասել է Նարեկ Գալստեանը:



### ԼԱՎՐՈՎԸ ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆ Է ԳՐԵԼ. «ԵՂՈՒԱՐԴ, ՀԱՄԱԶԱՅՆՈՒԻՐ՝ ԱՌԱՅ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»

Այն ինչ տեղի էր ունենում Յիւրիխում ամենաբարձր դիւանագիտական մակարդակով, հեշտութեամբ կարող էր դառնալ հրաշալի սցենար հոլիվուդեան քաղաքական թրիլլերի համար: Հայ-թուրքական արձանագրութիւնների ստորագրմանը նախորդել է մօտ 4-ժամանոց զգացմունքային տեսարան որն ընդհատուել է դասական երաժշտութեան միջոցով համերգով եւ փոքրիկ գրութեամբ, առանց որի բանակցութիւնների աւարտական փուլը քիչ էր մնում աւարտուէր մեծ սկանդալով: Այսպէս է նկարագրում «Ռոսիսկայա Գագետա»-ն Յիւրիխում հայ-թուրքական արձանագրութիւնների ստորագրման արարողութիւնը:

Թերթը շարունակում է. «Վերջնագրում բոլորը փորձում էին խուսափել վրիպումներից. Ոչ միայն Անկարան եւ Երեւանը, այլ նաեւ միջազգային միջնորդներ Ռուսաստանը, ԱՄՆ-ը, ԵՄ-ն: Անգամ ստորագրումից յետոյ հնչեցին տեքստերը կողմերը որոշել էին նախորդ ցուց տալ միմեանց, որի պատճառով էլ քիչ էր մնում ամէն ինչ խափանուէր»: Թերթն ընդգծում է, որ այս իրադարձութիւնը ԱՄՆ նախագահի կողմից «վերաբեռնաւորման» մասին յայտնի յայտարարութիւնից յետոյ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ առաջին համատեղ դիւանագիտական յաջողութիւնն է:

Ըստ թերթի, այս իրադարձութեան կարեւորութիւնն ընդգծելու համար Հիլլարի Քլինթոնից ու Սերգէյ Լավրովից բացի մասնակցում էին նաեւ Ֆրանսիայի եւ Սլովենիայի ԱԳ նախարարներն ու

ԵՄ խորհրդի գլխաւոր քարտուղար Նավիէր Սոլանան: «Իրադարձութիւններին հետեւող լրագրողներին սկզբում յայտնեցին, որ հայկական կողմը դէմ է հանդէս եկել Թուրքիայի ԱԳ նախարարի ելոյթում «Լեւոնային Ղարաբաղ» արտայայտութիւնը հնչելու կապակցութեամբ: Էդուարդ Նալբանդեանը շարունակել է պնդել, որ իր թուրք գործընկերոջ խօսքից դուրս բերուի այն միտքը, թէ Յեղասպանութեան հարցով կ'զբաղուի յատուկ ստեղծուած աշխատանքային խումբը: Իսկ ժամանակը գնում էր: Աւելի ու աւելի ակնյայտ էր դառնում, որ Հայաստանն ու Թուրքիան խոշոր դիւանագիտական ձախողումից մէկ քայլի վրայ են: Եւ այդ պահին ՌԴ ԱԳ նախարար Սերգէյ Լավրովը իր ձեռքն է վերցրել գրիչն ու անգլերէն լեզուով գաղտնի գրութիւն գրել Նալբանդեանին. «Էդուարդ, համաձայնուի արարողութեանը, առանց յայտարարութիւնների»: Այդ գրութեան տակ անմիջապէս յայտնուել են նաեւ Բեռլինի Գերմանիայի, Սոլանայի եւ Ջրոգարի ստորագրութիւնները: Իսկ ներքեւում Լավրովը ստորագրել է «10 հոկտեմբերի 2009 թուական: 19.35 (Յիւրիխի ժամանակով):»

Այդ դէպքից մօտ մէկ ժամ անց ստորագրման արարողութիւնը կայացել է: Ճիշդ է, առանց երաժշտութեան, առանց յայտարարութիւնների եւ ընթրիքի: Այդուհանդերձ, դիւանագետները հասել են իրենց ցանկացած արդիւնքին. փաստաթղթերը ստորագրուել են: Մնում է դրանք վաւերացնեն երկու երկրների խորհրդարանները:

### ՀՐԱՆԴ ԴԻՆՔԻ ԳՈՐԾՈՎ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ ԿՐԿԻՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՊԱՅԱՆՁՈՒՄ



«ԹԵՐԹ»: Հոկտեմբեր 12-ին Ստամբուլի Բեշիքթաշ համայնքի դատարանում կայացաւ Հրանդ Դինքի գործով դատավարութիւնը, որը թուով 11-րդն է: Յիշեցնենք, որ նախորդ դատավարումը տեղի էր ունեցել Յուլիսին:

Դատավարներին լրագրողների ներկայութիւնը խիստ սահմանափակ էր, անգամ Հրանդ Դինքի հարազատներից եւ ընկերներից շատ քիչ թուով մարդիկ էին ներկայացուցած: 11-րդ դատավարման ընթացքում պէտք է ելոյթ ունենար Հրանդ Դինքի որդին, Արաղը:

Միեւնոյն ժամանակ, Ստամբուլի Բեշիքթաշ հրապարակում հաւաքուել էր մարդկանց հոծ բազմութիւն, որոնց թուով էին նաեւ Հրանդ Դինքի ընկերներն ու մտերիմները:

Մարդկանց ձեռքին փոքր պատուներ եւ թղթեր էին, որոնց վրայ գրուած էր «Յանուն արդարութեան, յանուն Դինքի», «Հրանդ Դինքին սպանողները պէտք է դատուեն» եւ մի շարք այլ կարգախօսներ:

Հաւաքուածներին առջեւ ելոյթ ունեցան Հրանդ Դինքի ընկերները, որոնք պահանջում էին արդարութիւնը վերականգնել եւ բացայայտ

տել Հրանդ Դինքի սպանութեան մէջ ներքաշուած բոլոր անձանց: Այս ողջ ընթացքում հաւաքուածները պարբերաբար վանկարկում էին իրենց կարգախօսները, հաղորդում է Text.am-ի թղթակիցը Ստամբուլից:

Հաւաքուածները նշում էին, որ գրեթէ երեք տարի է անցել Դինքի սպանութիւնից, սակայն մեղաւորները չեն պատժուել, եւ մի օր նրանք պէտք է պատասխան տան իրենց արածի համար:

«Դինքին սպանողները էրզենեկոն գործով անցնող յանցագործներն են», - ասում էին ելոյթ ունեցողները:

Մարդիկ պահանջում էին, որ պէսզի Հրանդ Դինքի սպանութեան գործը միանայ «էրզենեկոնի» գործին:

«Ակօս» թերթի խմբագիր Արիս Նալչլին մեզ հետ զրոյցում նշեց, որ նման հաւաքները պարբերական բնույթ են կրում, եւ իւրաքանչիւր դատավարման ընթացքում մարդիկ հաւաքում են հրապարակում, ներկայացնելով իրենց պահանջները: Նշենք, որ Բեշիքթաշի հրապարակի բողոքի ցույցը լուսաբանում էին թուրքական մի շարք լրատուամիջոցներ, այդ թուում նաեւ հեռուստաընկերութիւններ:

### ԱՆՅԱԶՈՂ ՍԿԻԶԲ ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ

Շարունակուած էջ 1-էն

ու ստորագրել Արձանագրութիւնները: Քուլիսային բանակցութիւններէ ետք որոշուեցաւ բաւարարուիլ միայն ստորագրութեամբ, զանց ընելով ելոյթներու բաժինը:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեան եւ իր թուրք պաշտօնակից Դավիթթոյլու երբ վերջապէս նստեցան սեղանի շուրջ՝ ստորագրելու երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւնները կարգաւորելու ձգտող Արձանագրութիւնները, իրենց ետին կանգնած էին Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Հիլլարի Քլինթոն, Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերգէյ Լավրով, Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Պեռնար Քուշներ, Եւրամիութեան նախարարներու յանձնաժողովի նախագահ Սամուէլ Ժբոգար, Եւրամիութեան արտաքին եւ անվտանգութեան հարցերու ղեկավար Նավիէր Սոլանա եւ ուրիշներ:

Վաւերացուելու համար, Արձանագրութիւնները այժմ պէտք է

ներկայացուին երկու երկիրներու խորհրդարաններուն: Այս ուղղութեամբ Հայաստանի Ազգային Ժողովը պիտի սպասէ Թուրքիոյ խորհրդարանի վաւերացման:

Հայ-թուրքական Արձանագրութիւններու ստորագրման յաջորդող օրերուն արեւմտեան, ուղտական, տարածաշրջանային ու ընդհանրապէս համաշխարհային մասուլը կը շարունակէ լայնօրէն լուսաբանել այս իրադարձութիւնը, զայն նկատելով խիստ կարեւոր: Լրատուամիջոցները գլխաւորապէս դիտել կու տան որ միայն Հիլլարի Քլինթոնի միջամտութիւնը կանխած է ստորագրման արարողութեան ձախողումը:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերգէյ Լավրովը այս առթիւ յայտարարեց. - «Մենք անկեղծօրէն ուրախ ենք: Հայաստան ու Թուրքիա Ռուսաստանի բարեկամ երկիրներ են: Մոսկուան պատրաստ է աջակցիլ այս գործընթացին զանազան տնտեսական ծրագրերով, ուսու երկաթուղայինները պատրաստ են ապահովել հայ - թուրքական երկաթուղիի անխափան աշխատանքը»:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻՆ ՅԱԶՈՂՈՒԵԼ Է ՍՕՏԵՑՆԵԼ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հինգշաբթի, Հոկտեմբեր 8-ին Քիշնեւի մէջ կայացաւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի եւ Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիեւի հերթական՝ այս տարի արդէն հինգերորդ հանդիպումը:

Հանդիպումը մեկնարկել է ընդլայնուած ձեւաչափով՝ երկու երկրների արտգործնախարարների, ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցչի մասնակցութեամբ: Այնուհետեւ նախագահները զրոյցը շարունակել են դէմ առ դէմ, որից յետոյ նրանց կրկին միացել են համանախագահները եւ արտգործնախարարները:

«Երեք ժամ տեւած զրոյցի ընթացքում կողմերը կառուցողական տրամադրուածութիւն են ցուցաբերել՝ շարունակելու հակամարտութեան խաղաղ կարգաւորման շուրջ բանակցութիւնները», - ասուած է Հայաստանի նախագահի

մամլոյ գրասենեակի պաշտօնական հաղորդագրութիւնում:

Հանդիպումից յետոյ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Եուրի Մերզլակովը ասել է, որ այն կառուցողական էր, եւ կողմերին յաջողուել է մօտեցնել իրենց դիրքորոշումները Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցում:

Ամերիկացի համանախագահ Ռոբերտ Բրադկէյն յաւելել է, որ նախագահները կէտ առ կէտ անցել են միջնորդների ներկայացրած փոփոխութիւններով եւ նոր լրացումներ են արել:

Նախագահները պայմանաւորուել են նորից հանդիպել եւ արտգործնախարարներին յանձնարարել են նոր հանդիպում կազմակերպել, որի ժամանակ ներկայացուած կը լինեն արդէն Մարդիկեան սկզբունքները նորացուած տարբերակով՝ իրենց իսկ լրացումներով:

### ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարունակուած էջ 1-էն

վարչախումբը պատրաստուած է նոյնքան անընդունելի գիշումների դարաբաղեան հիմնախնդրում:

«Հակազգային եւ այս գործընթացը կանխելու եւ հետագայ կորուստներից խոյս տալու միակ միջոցը, ինչպէս մէկ տարի առաջ, այնպէս էլ հիմա, Հայ ազգային

Գոնկրէսը շարունակում է համարել Սերժ Սարգսեանի հրաժարականը, ինչին տուեալ պայմաններում հնարաւոր է հասնել միայն համընդհանուր ընդլայնումը եւ այդ պահանջի շուրջ հայաստանեան քաղաքական ուժերի եւ հասարակութեան տարբեր խաւերի առաւելագոյն համախմբմամբ:», կ'եզրակացնէ ՀԱԳ-ի յայտարարութիւնը:



**ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

**ԹՈՒՐԲԻԱՆ ՍՏԱՑԱԻ, ԻՆՉ ԻՐԵՆ ՊԵՏՔ ԷՐ  
Հարցազրույց Հայ ազգային կոնգրեսի  
համակարգող Լեւոն Զուրաբեանի հետ**

Հոկտեմբերի 10-ին Ցիւրիխում ստորագրուեցին հայ-թուրքական նախաստորագրուած արձանագրութիւնները: Ընդ որում, այդ արարողութիւնը տեղի ունեցաւ նախատեսուածից աւելի քան երեք ժամ ուշացումով: Ինչպէ՞ս կը մեկնաբանէք այդ երեւոյթը:



Հիմնականում ուշադրութիւն սեւեռուեց այս ուշացման վրայ, սակայն կարծում եմ՝ ամենակարեւորը ցիւրիխեան գործարքն էր: Սրանով, ըստ էութեան, թուրքիան պէտք է ստանայ ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի կասեցումը, իսկ ՀՀ-ն՝ բաց սահմաններ: Այստեղ, ցաւօք սրտի, երկու խնդիր կայ: Առաջին՝ սա բարոյապէս անընդունելի գործարք է. բաց սահմանները՝ ցեղասպանութեան ուրացման գնով, անընդունելի է: Եւ երկրորդ խնդիրն այն է, որ անգամ ձեւականօրէն ձեւակերպուած այդ գործարքը չի գործելու: Թուրքիան ստանալու է այդ գործարքի՝ իրեն բաժին հասած մասը, իսկ Հայաստանը՝ ոչ: Թուրքիան նոյնիսկ արձանագրութիւնների ստորագրումից յետոյ շատ յստակ յայտարարեց, որ սահմանը չի պատրաստուում բացել, մինչեւ առաջընթաց գրանցուած չլինի ԼՂ խնդրում: Ցեղասպանութեան ուրացման դիմաց Հայաստանը ստացել է ընդամէնը թղթի վրայ ամրագրուած խոստում՝ սահմանը բացելու մասին եւ մշուշոտ հեռանկար, որը թուրքիան յստակօրէն կապում է ԼՂ խնդրի հետ: Փաստօրէն, իշխանութիւնները ստել են երկու հարցում. միջկառավարական պատմական ենթադրանքներով ԼՂ խնդրում Եւրոպայի Ցեղասպանութեան հետ կապուած հարցեր, եւ թուրքիան էլ հարցին մօտենալու է «արդեօ՞ք ցեղասպանութիւն եղել է, թէ ոչ» ենթատեքստով: Այնպէս որ, Հայաստանի իշխանութիւնները ստել են՝ ասելով, որ պատմական յանձնաժողովը չի ուսումնասիրելու ցեղասպանութեան հարցը: Հայաստանի իշխանութիւնները նաեւ ստել են, երբ յայտարարել են, թէ այս համաձայնագրով հայ-թուրքական յարաբերութիւնների հաստատման հարցն անշուտուէլ է հայ-ադրբեջանական յարաբերութիւնների կարգաւորումից: Համաձայնագրերը վաւերացնելու մասին դրոշմը յատուկ գրուած է այս նպատակով, որը թուրքիային թողլ կը տայ իրար կապել այդ երկու հարցերը, եւ թուրքիան յստակ յայտարարել

է, որ սահմանը բացուելու է միայն ԼՂ խնդրում առաջընթացից յետոյ:

Իսկ ինչպէ՞ս կը մեկնաբանէք արձանագրութիւնները ստորագրում ուշացումը:

Սա ընդամէնը ՀՀ-ի իշխանութիւնների համար PR նշանակութիւն ունէր: Եթէ թուրքիան անէր իր յայտարարութիւնը, ապա ակնյայտ էր դառնում, որ Հայաստանի իշխանութիւնները ստել են սեփական ժողովրդի առաջ: Այսինքն՝ Հայաստանի իշխանութեան պաշարը եղել է ոչ թէ արձանագրութիւններում փոփոխութիւններ կատարելու համար, այլ՝ իր սեփական սուտը չբացայայտուելու համար: Սրա համար են պայքարել Հայաստանի իշխանութիւնները եւ էդիկ Նալբանդեանը: Եւ Նալբանդեանը հասել է նրան, որ Հայաստանի իշխանութիւնների սուտը բացայայտող յայտարարութիւնը չի արուել: Սակայն կարծում եմ, որ դա մեծ նշանակութիւն չունի, քանի որ այդ ամէնին հետեւած թուրքիայի իշխանութիւնների յայտարարութիւնները բացայայտել են սուտը:

Իշխանութիւնները չէ՞ն հասկանում այս ամէնը, չէ՞ն հասկանում, թէ ինչ են անում, թէ՞ ստիպուած են գնում այդ քայլերին:

Իշխանութիւնները ստանում են այս 11 տարիների ընթացքում իրենց վարած քաղաքականութեան հետեւանքները, այս կողում պացուած, օլիգարխիկ ռեժիմի հետեւանքները, քաղաքական համակարգի աղճատման հետեւանքները: Նրանք ստեղծել են մի Հայաստան, որն ըստ էութեան չունի կամք, չունի զարգացման ռեսուրսներ, եւ այսօր ստիպուած է սեփական իշ-

Շաբ.բ էջ 18

**ՄԻՋ-ԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԱԲ  
ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԵՋ**

Կիրակի Հոկտեմբեր 10-ին, կեսօրէ ետք ժամը 2:00 ին մօրոնքոյի Հայ Կեդրոնի երիտասարդաց համալիրի սրահին մէջ տեղի ունեցաւ միջ-կուսակցական (ՍԴՀԿ, ՀՅԴ, ՈԱԿ) հանրահաւաքը ընդդէմ մէկ օր առաջ տեղի ունեցած Հայաստան-Թուրքիա արձանագրութեան, ստորագրութեան: ՍԴՀԿ-ի անունով խօսք առաւ իրաւաբան Պարգեւ Դաւիթեան, ՀՅԴ-ի խօսքը ներկայացուց Վազգէն Թերզեան եւ ՈԱԿ-ի անունով խօսեցաւ Թագուհի Ուրփալեան:

Տեղի ունեցաւ նաեւ տեսաերիզի ցուցադրութիւն, աշխարհի տարբեր քաղաքներու մէջ տեղի ունեցած բողոքի ցոյցերին:

Շնորհաւորելի էր ձեռնարկի երիտասարդ ուժերու մասնակցութիւնը, յանձին հանդիսավար Զոհրապ Սարգիսեանի, ասումը Ռաֆֆի Սարգիսեանի եւ երգիչ Սեւակ Թիթիզեանի եւ տեսաերիզի վրայ աշխատող երիտասարդներ՝ Արա Հասրճեանի եւ Արա Քրճիքեանի:

Ստորեւ, ՍԴՀԿ Փարամազ մասնաճիւղի անունով Պարգեւ Դաւիթեանի ելոյթը:

*Սիրելի Ներկաներ,  
Սիրելի Սփիւռքահայ ժողովուրդի իրաւատէր եւ պահանջատէր որդիներ.*

*Դուք գաւակներ, թոռներ եւ թորնորդիներ այն հայրերուն եւ մայրերուն, որոնք թուրքին կողմէ իրենց պապենական գիւղերէն եւ քաղաքներէն բռնի տեղահանուեցան, աքսորուեցան եւ հայրենագուրկ դարձան:*

*Դուք տէրերը հայ դատին եւ զոհերը հայոց ցեղասպանութեան անաւոր ոճիրին, եկած էք այսօր Ո՞ջ ըսելու անոնց որոնք կը փորձեն կամ կը յանդգնին ձեզ ներկայացնելով ձեր իրաւունքները սակարկութեան նիւթ դարձնել, կը փորձեն կամ կը յանդգնին ձեր հայրենի հողերը իրենց տնտեսական եւ քաղաքական շահերուն համար ծախու հանել: Ձեր նահատակաց սուրբ եւ անարատ արիւնը թուրք ուրացման եւ ցածուութեան ցեխով խառնել ու մրտել:*

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անունով կ'ըսեմ որ շոյն եւ պատիւ ձեզի, որ անսալով եղեռնի մեր նահատակաց արեան կանչին եւ վերապրողներու արդար դատին, եկած էք այսօր բարձրացնելու ձեր բողոքի ձայնը եւ յայտնելու ձեր զայրոյթը, Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններուն ստորագրութեան դէմ:*

*Ինչպէս գիտէք, երէկ, Զուլիցերիոյ Զիւրիխ քաղաքին մէջ, կնքակցութեամբ Ամերիկայի, Ռուսիոյ, Ֆրանսայի եւ Եւրոպական Միութեան, որոնց ներկայացուցիչները շարուած էին ստորագրողներու ետին, որպէս հայ ժողովուրդի պատմական իրաւունքները ծախու հանող նոր «սմարներ», Հայաստանի ներկայացուցիչ*

*Նալպանտեանը, անտեսելով Սփիւռքի եւ Հայաստանի հայութեան մեծամասնութեան պահանջը, ստորագրեց Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները կոչուող փաստաթուղթը:*

*Հեռատեսիլէն դիտողը, ի տես Տաւուսօղլուի ժպիտին եւ Նալպանտեանի խոժոռ դէմքին, արդէն կռահեց թէ ով էր յաղթականն ու ով էր պարտեալը:*

*Սփիւռքահայութիւնը, որպէս անմիջական հետեւանքը ցեղասպանութեան եւ իրաւաջորդը անոր զոհերուն, պարտաւոր է երբեք ընդունիլ ստորագրուած արձանագրութիւնները, ուր՝ եթէ, չկան նախապայմաններ, ինչպէս կը պնդեն Հայաստանի ներկայ իշխանաւորները, առնուազն կան սակայն ԱԿԱՆՆԵՐ, որոնք ենթակա են պայթելու, ամէն քայլափոխին, մեր ազգի երեսին:*

*Հայաստանի իշխանութեան որոշելու գործն է թէ Հայաստանը ինչպէս կ'ողջ շփումներ ունենալ թուրքիոյ հետ: Սփիւռքը չի կրնար Հայաստանին պարտադրել թէ ինչ տեսակ յարաբերութիւններ ան պէտք է մշակել թուրքիոյ հետ:*

*Սակայն այն ինչ որ կը վերաբերի Հայոց ցեղասպանութեան, եւ բռնագրաւուած Արեւմտահայաստանին, հարցը կը տարբերի: Այս պարագային, սփիւռքի կարծիքը, որպէս իրաւատէր, խիստ կարեւոր է, որովհետեւ, վերջիվերջոյ, հայ պահանջատիրութեան իրաւատէրը, Սփիւռքահայութիւնն է:*

*Հայաստանը իրաւունք չունի ցեղասպանութեան հարցը որպէս պետական քաղաքականութիւն արձարծել:*

Շաբ.բ էջ 19

Advertisement for Bedros S. Maronian insurance services. Includes logos for Blue Cross of California, Blue Shield of California, and A.A. Insurance Services. Text: SERVING SINCE 1975, BEDROS S. MARONIAN, (818) 500-9585, BMaronian@AOL.com, FAX 500-9308, ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway, Glendale, CA 91205. ԵՐԻՔԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ





**ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ**

**ԻՆՏԵԳՐՈՒԵԼԸ ԿԱԳՈՆՈՎ ՉԷ**

**ՃԷՅՄՍԹԱԿՈՐԲԱՆ  
«ԼՐԱԳԻՐ»**

Սերժ Սարգսեանը սփիւռքահայութեան ներկայացուցիչներին հետ հանդիպումներում կրկնել է իր այն միտքը, թէ իհարկէ հայ-թրքական յարաբերութեան նախաձեռնութեան կապակցութեամբ կան մտահոգութիւններ, սակայն դրանք չպիտի լինեն յարաբերութիւն հաստատելու ցանկութեան խոչընդոտ: Սերժ Սարգսեանն իր այդ մտքի որպէս շարունակութիւնն է բերում Հայաստանի անկախացման եւ Ղարաբաղի պատերազմի օրինակը, ասելով, թէ այն ժամանակ էլ կային մտահոգութիւններ, սակայն Հայաստանն անկախ է, իսկ Ղարաբաղի պատերազմն էլ յաղթած:

Առաջին հայեացքից ծանրակշիռ թուացող փաստարկն ու օրինակը իրականում բաւական անհամարժէք են: Բանն այն է, որ պետական, միջպետական եւ աշխարհաքաղաքական յարաբերութիւնների ամէն մի կոնկրետ օրինակ ունի իր տարրերն ու նրբերանգները, իր տրամաբանութիւնը: Ո՞րն էր Հայաստանի անկախութեան եւ Ղարաբաղի պատերազմի տրամաբանութիւնը: Թերեւս այն, որ այդ ամենին այլընտրանք չկար: Այսինքն, Հայաստանը չէր կարող չլինել անկախ, եթէ այլեւս գոյութիւն չունէր Խորհրդային Միութիւն: Ո՞ւմ կազմում էր մնալու Հայաստանը, եթէ ԽՍՀՄ գոյութիւն չունէր: Նոյնը Ղարաբաղի պատերազմի պարագայում: Եթէ Ատրպէյճանը գէնքով գալիս է գրաւելու Ղարաբաղը, ապա այլեւս ինչ մտահոգութիւն էլ ունենաս, որ կարող ես պարտուել՝ մնում է կամ խաղաղ կապիտուլիացիան, կամ զինուած պայքարը, առաւել եւս, եթէ պաշտպանուելու հետ մէկտեղ նաեւ ունենա գաղտ լինելու ցանկութիւն:

Հետեւաբար, հայ-թրքական յարաբերութեան գործընթացն իր մտահոգութիւններով, եւ Հայաստանի անկախութեան եւ Ղարաբաղի օրինակները միանգամայն անհամատեղելի են: Թէեւ, գուցէ հայ-թրքական յարաբերութեան պարագայում էլ Հայաստանն այլընտրանք չունի: Այսինքն, Հայաստանն այլ էլք չունի, քան բարեկամանալ Թուրքիայի հետ այն պայմաններով, ինչ որ առաջարկում են հայ-թրքական արձանագրութիւնները: Այդ դէպքում Սերժ Սարգսեանը թերեւս աւելի ազնիւ ու բաց թող յայտարարի հասարակութեանը, որ մենք ուզենք, թէ չուզենք, այս պայմաններով պէտք է կարգաւորենք յարաբերութիւնը Թուրքիայի հետ, քանի որ մեզանից դա է պահանջում ասենք Ամերիկան, Ֆրանսան, Եւրոպան կամ Ռուսաստանը, կամ բոլորը միասին, կամ

Երկուշաբթի մէկը, Երեքշաբթի միւսը, Չորեքշաբթի երրորդը եւ այդպէս շարունակ: Այսինքն, թող իշխանութիւնը համարձակութիւն ունենայ հասարակութեանը հաղորդելու, որ եթէ մենք չհամաձայնենք նրան, ինչ կայ, ապա ստիպուած ենք լինելու դա ընդունել ուժի պարտադրանքով:

Բայց այդ մասին չի ասուում ոչինչ: Աւելին, ամէն ինչ ներկայացուած է որպէս կամաւոր եւ լայնախոհ ընտրութիւն, նախաձեռնութիւն: Թէեւ իհարկէ որոշակիօրէն ակնարկուած է, յաճախ ուղղակի, թէ եթէ Հայաստանը չզնայ այդ կարգաւորմանը, ապա կը մեկուսանայ աշխարհի զարգացումից եւ չի կարող զարգանալ եւ դառնալ բարեկեցիկ պետութիւն: Դա արդէն իհարկէ լիակատար խեղաթիւրում է, բլեֆ: Բանն այն է, որ ժամանակակից աշխարհում տեխնոլոգիական առաջընթացը հասել է այն աստիճանի, որ տարածութիւնը դարձել է բաւական փոքր: Չէ՞ որ նոյն իշխանութեան ներկայացուցիչ Տիգրան Սարգսեանն էր ասում, որ աշխարհը փոքրացել է: Հետեւաբար աշխարհին համընթաց զարգանալու համար ամենեւին պէտք է Թուրքիայի հետ սահմանը բացելը դիտել որպէս միակ կամ ամենաօպտիմալ էլք: Եթէ ասենք հայկական ապրանքների արտադրութեամբ վազոնները Եւրոպա գնան Թուրքիայի տարածքով, կամ Եւրոպական վազոնները նոյն տարածքով գնան Հայաստան, դա ամենեւին չի նշանակում, որ Հայաստանն ինտեգրուեց աշխարհին: Եթէ իշխանութիւնն ու հայ-թուրքական յարաբերութեան ներկայիս պայմաններով կարգաւորման Հաստատվներն այդքան նոր մտածողութեան կրող են, ապա պէտք է իրենց ջատագովութիւնն անելու այլ հիմնաւորումներ թերեւս գտնեն, քանի որ պէտք է որ պատկերացնեն, որ նոր աշխարհում ինտեգրացիա հասկացութիւնը առաւելապէս մտաւոր եւ արժէքային, քան ֆիզիկական գործընթաց է: Վազոնները չեն ինտեգրացիայի խորհրդանիշը, այլ արժէքները: Իսկ դրանք վազոնով չէ, որ տեղափոխում են: Վազոններն ընդամենը հանդիսանում են արժէքների արդիւնք: Հետեւաբար, եթէ որեւէ մէկը ցանկանում է Հայաստանն ինտեգրել աշխարհին, ապա պէտք է նախ արժեքային առումով հասնի այդ ինտեգրացիային, ու ինքն էլ թերեւս չի նկատի, թէ ինչպէս են գալիս «վազոնները»: Եւ երեւի թէ հարկ է ամէն մի ընդդիմախօսութեան վերջում շեշտել, որ հայ-թուրքական ներկայիս յարաբերութեան գործընթացի բովանդակութեանը դեմ խօսելը ամենեւին չի նշանակում խօսել փակ սահման

Շաբ.ը էջ 18

**«ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ» ԳԻՆԸ**

**ԱԼԻԵԻԸ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԹԹԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԻԱԴՈՐՄԱՆԸ ԵՒ ՉԱՆԳԵԶՈՒՐԻ (ՍԻՒՆԻՔԻ) ԿԵՐԱԴԱՐՁԻՆ**

**ԱՐԻՍ ՂԱԶԻՆՅԱՆ  
«ԱՐՄԵՆԻԱ ՆԱՌԻ»**

Մինչ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը փորձում էր բացատրել արտերկրի իր հայրենակիցներին, որ Երեւանի ու Անքարայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին Օգոստոսի 31-ին նախատորագրուած արձանագրութիւններում ոչ մի թրքական նախապայման չկայ, նրա ատրպէյճանցի պաշտօնակից Իլհամ Ալիեւը գտնուած էր Երեւանից ընդամենը 100 կմ հարաւ՝ բարձրաձայնելով թրքական յաւակնութիւնները հայկական հողերի նկատմամբ:

Այդ յայտարարութիւնները հնչեցին թրքալեզու պետութիւնների 9-րդ գագաթնաժողովում: Եւ բնաւ պատահական չէր, որ գագաթնաժողովի անցկացման վայր էր ընտրուել հին հայկական Նախիջևանը, որը բոլշեւիկները յանձնել էին Խորհրդային Ատրպէյճանին:

Գիւլը յայտարարեց Ատրպէյճանի կողքին կանգնելու եւ նրա «գրաւեալ տարածքներն» ազատագրելու հարցում աջակցութիւն ցոյց տալու՝ Թուրքիայի պատրաստակամութեան մասին:

Խորհրդային տարիներին Երեւանից Նախիջևան հասնելու համար պահանջուած էր երկու ժամ: Այսօր այդ երկու քաղաքները բաժանուած է մի ամբողջ պատմութիւն: Ըստ պաշտօնական վարկածի՝ հենց այս քաղաքում է լոյս աշխարհ եկել Ատրպէյճանի ներկայ դեկավարի հայրն ու անմիջական նախորդ, նախկին նախագահ Հեյդար Ալիեւը:

Մի քանի տարի առաջ ատրպէյճանցիները հենց Նախիջևանում ոչնչացրին աւելի քան 4000 միջնադարեան հայկական խաչքարեր՝ այս տարածքում հայկական քաղաքակրթութեան հետքերը վերացնելու նպատակով:

Իսկ այժմ եկել է ժամանակը հենց Նախիջևանից յայտարարելու Հայաստանի Սիւնիքի մարզի (յայտնի է նաեւ որպէս Չանգեզուր) նկատմամբ տարածքային յաւակնութիւնների մասին:

Գագաթնաժողովին մասնակցում էին Ատրպէյճանի, Թուրքիայի, Ղազախստանի, Ղրղզստանի նախագահներն ու Թուրքմենստանի վարչապետը: Նման արմատական յայտարարութիւններով հանդէս գալուց առաջ Ատրպէյճանի նախագահն իր պարտքը համարեց կրկին յիշեցնելու, թէ «Նախիջևանը բնիկ ատրպէյճանական հող է եւ Ատրպէյճանի՝ Թուրքիային սահ-

մանակից միակ տարածքը»:

Ապա Ալիեւը ներկայացրեց իր անմահ հօր ու նրա եղբայրների մասին «նաղլը»: «Ալիեւները միշտ չիչել են Չանգեզուրի լեռնային կածանների մանր ու մեծ քարերը, որ քերծում էին նրանց ոտքերը, այդ խոտերը, ծառերն ու թփերը, որ կշտացնում էին, պատսպարում: Նրանք փախչում էին հայերից: Երկարթափառուներին յետոյ Նախիջևանը նրանց աւետեաց երկիր թուաց»: Սրտածմլիկ պատմութիւնը Նախիջևանի ու անմոռանալի Հէյդար Ալիեւի մասին խորապէս յուզել էր Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւին:

«Հէյդար Ալիեւն ու Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը (Թուրքիայի առաջին նախագահը) երագում էին թրքալեզու ժողովուրդների միասնութեան մասին», - ասաց նա կերկերուն ձայնով: - «Սեր Նախինիներն իշխել են ընդարձակ տարածքների վրայ՝ Միջերկրական ծովից մինչեւ Ալթայ, եւ թողել են մեզ մեծ արժէքներ: Կարծում ենք՝ ժամանակն է, որ դրանք յայնօրէն ներկայացուեն ամբողջ համաշխարհային հանրութեանը»:

Իսկ Ալիեւն անցաւ Հայաստանի Սիւնիքի մարզի՝ Չանգեզուրի մասին մտորումներին:

«Ժամանակին Ատրպէյճանի պատմական, բնիկ տարածքի՝ Չանգեզուրի շրջանի անջատումը նրանից ու դրա միացումը Հայաստանին, աշխարհագրական առումով մասնատեց մեծ թրքական աշխարհը: Այսպիսով, թրքական աշխարհի՝ որպէս միասնական ընտանիքի գործունէութիւնը, դադարեցուեց տասնամեակներով»:

Գագաթնաժողովի աշխատանքների արդիւնքում ստորագրուել է Նախիջևանի հռչակագիրը եւ Համաձայնագիր թրքալեզու պետութիւնների համագործակցութեան միութիւն ստեղծելու մասին: Այդ փաստաթղթերի ստորագրումից յետոյ Ալիեւն ասել է. «Ընդունած որոշումների ու ձեռնարկած քայլերի շնորհիւ մենք այսօր աւելի ամրապնդեցինք թրքական կապը: Թէեւ աշխարհագրական առումով մեր արանքում է Չանգեզուրը՝ հին ատրպէյճանական տարածք, որ ներկայումս գտնուում է Հայաստանի վերահսկողութեան տակ»: («Չանգեզուր» ասելով՝ նա նկատի ունի Հայաստանի Սիւնիքի մարզը:)

«Կարող են բացուել բոլոր ճանապարհները, հաղորդակցութեան բոլոր միջոց-

Շաբ.ը էջ 19

**ՏԵՄԷՔ ԵՐԹ**  
**BANKRUPTCY-Ի ՕՐԵՆՔՆԵՐԸ**  
**ԿՕԳՆԵՆ ՉԵՁԻ, ՉԱՆԿԱՅԱՐԷՔ**

**JANSEZIAN LAW FIRM, PC**

**If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!**

**225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101**

**Call Now for a FREE Consultation: 626-432-7209**



Nazareth V. Jansezian, Esq.



# ՀՈԿՏԵՄԲԵՐ 27

## ՀՈԿՏԵՄԲԵՐ 27, 1999 ՄԵԾ ՈՃԻՐԻՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

### ՀԱՅԿՆԱԳԳԱՇԵԱՆ

Ինչ լաւ պիտի ըլլար որ լաւ բաներու տաճարներէն չի շնորհակալու անոնք, Հայրենիքի յառաջդիմութեան եւ հայրենի իշխանութեան ազգագրութեան իրագործումներով ուրախանալիք ու հպարտանալիք եւ ափսոսալով սփիւռքահայութեան մեր դժբաղդ ճակատագրին՝ երանի տալիք անոնց, որ հայրենի հողին վրայ ապրելու երջանկութիւնը կը վայելեն անոր անմահական օրովն ու ջուրովը: Մեծ բան չէ ուզուածը. նաեւ կամ օգնուած չէ, անոնցմով աշխարհը պտտելու եւ շնորհ կ'ընէր ապրելու համար սուղ պահովներու եւ քաղցրութեան մէջ: Համեստ ու բնական ակնկալութիւն մըն է հայրենի հողին վրայ՝ սեփական բոլորին մէջ ապրելու եւ ի վերջոյ հոն ալ թաղուելու համար: Ծուռն ու կատուն իսկ ունին այդ բնատուր իրաւունքը իրենց բոլորին կամ որչին մէջ ապրելու, բայց մենք՝ սփիւռքահայերս գրկուած ենք այդ շատ տարրական ու բնական իրաւունքը վայելելու երջանկութեան:

«Բայց ո՛վ է քեզի արգիլողը, գնա՛ր եւ հոն ապրէ՛ք եթէ կրնաս» կ'ըսէ ներքին ձայն մը ինծի: Եթէ կրնաս...: Չէ, չեմ կրնար: Տակաւին վերջերս այցելեցի հոն եւ անարդարութիւն, կաշառակերութիւն ու ոճրամիտ իշխանութիւն տեսայ, մենաշնորհեալ եւ անբարոյ ճորտութեան կողքին տեսայ համատարած թշուառութիւն եւ աղտաքութիւն: Տեսայ բարոյալքուած եւ կորովագուրկ ժողովուրդ մը, որ հայրենաշինութեան հնամաշ քարոզչութեան յոգնած՝ հայրենիքին կը հեռանայ ամէն ուղիով: Տեսայ իշխանութիւն մը, որ իր ոճրային անցալին վրայ թրքանապատ ծառայութիւն ալ կ'ուզէ բարդել՝ առանց նախապայմանի թուրքիոյ հետ բարեկամութիւն մշակելու համար, հայ եւ թուրք յարաբերութեան մօտիկ անցեալը, մեր պատմական հայրենիքին բռնազրաւումը եւ գործած ցեղասպանութիւնը պատմաբաններու

յանձնարումքի մը քննարկման ենթարկելու համար եւ տակաւին շունդալից մեծ գործերու համար՝ ինչպէս ուռուցիկ «Ֆուլթայլային դիւանագիտութիւնը»:

Ամորձատուած եւ առնակաճարութիւնը կորսնցուցած է հայրենի ժողովուրդը, որ տաս տարի է ի վեր կը տառապի այս ոճրագործ իշխանութեան լուծին տակ:

Այո՛, տաճարներէն է Մեծ Ոճրին: Տաս տարի առաջ, 1999 Հոկտ. 27-ին գործուեցաւ վերջին ժամանակներու հայ կեանքի պատահաւոր մեծագոյն ոճիրը, հայրենի խորհրդարանին մէջ սպանելով հայրենիքի տաճարէն մը լաւագոյն գաւազները՝ Կարէն Դեմիրճեանի եւ Վազգէն Սարգսեանի գլխաւորութեամբ: Պէտք կ'ա՛յ մանրամասնել այս ազգաբազմի ոճիրին ծախքերը եւ զայն հրահանգողներու ինքնութիւնը ճշդելու համար, պէտք կ'ա՛յ հարցնելու թէ նախագահ Քոչարեան եւ Պաշտպանութեան եւ Ապահովութեան նախարար Սերժ Սարգսեան ինչո՞ւ բացակայ էին խորհրդարանի այդ նիստէն: Կասկածիլ կարելի՞ է որ այդ երկուքն մին ոճիրը չղացուցանէր եւ գործադրել տուողները: Ապացո՞յց կ'ուզէիք... խորհրդարանի ապահովութեան հակող Ս. Սարգսեանի ոստիկաններն ու գաղտնի գործակալներն ինչպէ՞ս թույլատրեցին Յունանեանի գլխաւորած վոհմակին մուտքը՝ իրենց ոճրային յանձնարարութիւնը կատարելու համար: Նախագահ Քոչարեան ի՞նչ յանդիմանութեամբ մտաւ սպանդանոցի վերածուած խորհրդարանը եւ արիւնոտ ձեռքերով ոճրագործները ձերբակալելով առաջնորդեց բանտ: Ինչո՞ւ հլու-հնազանդ ոչխարներու պէս հետեւեցան եւ ինչո՞ւ զինք ալ չսպաննեցին, եթէ համոզուած էին որ կրնային ցմահ բանտարկութեան դատապարտուիլ: Մինչ իրենց սահմանուած պատիժը բանտարկութեան երեւոյթով իրենց կեանքը ապահովելու ձգտող միջոցառում մըն էր հաւանական վրիժառութեան դէմ, միաժամանակ զիրենք գրկելով ոճիրին գաղտնի



Ծախքերը բացայայտելու կարելիութեան:

Եւ վերջապէս, ինչո՞ւ տաս տարի է ի վեր բաց դատարանով չեն դատուիր ոճրագործները:

Այս ինչո՞ւները մէկ պատասխան ունին միայն: Որովհետեւ, ոճրագործները Հայաստանի պետութեան ղեկը իրենց ձեռքը առնողներն են՝ մէկը իբրեւ նախկին նախագահ, միւսը՝ իբրեւ գործող նախագահ:

Այս դառն խորհրդածութիւններուն մէջ խորանալով մարդ կը ստիպուի մտածելու, թէ ո՞ւր են սպաննուածներուն վրիժառուները: Եթէ ոճիրը գործողները բանտն են, զայն ծրագրողներն ու գործադրել տուողները ողջ-առողջ եւ հանգիստ փառաւոր կեանք կ'ապրին առանց դոյզն խղճահարութեան: Ըստ երեւոյթի անոնք խիղճ ալ չունին:

Բայց աւելի ողբալի երեւոյթը

Հայաստանի ժողովուրդին վիճակն է, ո՛չ այն վիճակը, որուն մէջ կը տառապի ան՝ բերանը գոց պահելով գլուխը ուսին վրայ պահելու մտահոգութեամբ: Այդ վիճակը՝ տնտեսական տագնապ, ֆիզիքական գոյութեան պահպանում, անարդարութիւն, կաշառակերութիւն, բռնութիւն, անպատիժ մնացող հովանաւորուած ոճրագործութիւն եւ այլն, յայտնի են բոլորիս, բայց բոլորէն աւելի ողբալի ժողովուրդին ազգային եւ անհատական արժանապատութեան պարպտուիլն է: Այո՛, մարդկային արժանապատութիւնը ողբալի մակարդակի մը իջած է: Ամորձատուած, առնակաճարութեան գուրկ մարդոց զանգուածի մը վերածուած է Հայաստանի ժողովուրդը, որ տաս տարի է ի վեր անհասման տառապանքով կը հանդուրժէ ոճրագործներու իշխանութեան:

Այլպէս...

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA**

**ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor






**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Քայրափոքրէք բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, լոզարի եւ մկանային ցաւեր:  
Ինքնաշարժի վթարի հետեանքով պատասեած վնասուածքներու բուժում:

**Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է**

**Աւանդութիւններու հիմքով կերպել պայծառ ապագայ**

**Հ. Բ. Ը. Մ.**

Երուանդ Պապայեան Մանկավարժական Հիմնարկ

**“Ա Զ Գ Ա Ն Ո Ւ Ի Ր Ո Ւ Մ”**

Ազգային Ինքնութեան եւ Նկարագրի Կերտման Ծրագիր

2009-ի Մասնակիցներու Պարգևատրում

2010-ի Թեկնածուներու Ներկայացում

Պատանեկան Մշակութային Յայտագիր

Կիրակի, Հոկտեմբեր 18, 2009

Կէսօրէ ետք Ժամը 3-ից

Արեւմտեան Թեմի Առաջնորդարան

3325 North Glenoaks Blvd. Burbank, Ca 91504

Սիրալիք Հրատէր Բոլորին

Յանդեպ տեղեկութիւններու համար դիմել

Օրդ. Լորա Գույումճեանից (310) 212-5851

Պրճ. Յարութ Տէր Պապիեանից (818) 590-9293

Տիկ. Անժելա Բարսեղեանից (818) 943-5909



ՊԱՐՈՒԹԱՅԻՆ

ՕՐԼԱՆՏՈՅԻ ՎԱՍԱՅՆՔԸ ՆԱԽԱՁԵՌՆԱԾ Է ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԹԵԱՆ

Եկեղեցույ հիմնարկէքի առիթով՝ Առաջնորդ Սրբազանը յայտարարեց Թուֆայեան ընտանիքի կողմէ կատարուած առատաձեռն նուիրատուութիւնը հակառակ տիրող խոնավութեան եւ անձրեւներուն՝ Օրլանտո, Ֆլորիտայի ծուխի անդամները Կիրակի Սեպտեմբեր 27-ին (2009) խուռներամ ներկայ գտնուեցան համայնքի ի մօտոյ կառուցուելիք եկեղեցույ հիմնարկէքի արարողութեան:

Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան հովուական այցելութեան եկած էր ծուխին՝ նախագահելու համար հիմնարկէքի արարողութեան եւ օրհնելու կառուցուելիք եկեղեցույ չորս հիմնաքարերը:

Արարողութենէն ետք տեղի ունեցած ճաշկերոյթին՝ Առաջնորդ Սրբազանը յայտարարեց թէ Տէր եւ Տիկ. Հէրի եւ Սիլվեր Թուֆայեան եւ ընտանիքը առատաձեռնօրէն 750,000 տոլարի խոստում մը ըրած էին եկեղեցույ, որ պիտի անուանուի Ս. Յարութիւն Հայց. Եկեղեցի՝ ի յիշատակ Հէրի Թուֆայեանի հօր:

Պրն. Թուֆայեան, որ սեփականատէրն է յիմնարկէքի «Ի, հանրածանօթ բարերարներէն է Արեւելեան Թեմի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: Ան Ս. Յարութիւն Հայց. Եկեղեցույ կնքահայր պիտի ըլլայ, երբ որ շինարարական աշխատանքը լրանայ յառաջիկայ գարնան:

Սեպտեմբեր 27-ի հիմնարկէքի արարողութեան՝ Առաջնորդ Սրբազան Հօր որպէս առընթերակայ կը մասնակցէին Հոգ. Տ. Նարեկ Վրդ. Պէրպէրեան, հոգեւոր հովիւ Պոքա Բաթոն, Ֆլորիտայի Ս. Դաւիթ Հայց. Եկեղեցույ եւ Արժ. Տ. Յովնան Քհնյ. Տէմիրճեան, հոգեւոր հովիւ Ս. Փիթըրզպըրդի, Ֆլորիտայի Ս. Յակոբ Հայց. Եկեղեցույ: Ներկայ էին Ս. Դաւիթ եւ Ս. Յակոբ եկեղեցիներու խորանի ծառայողները եւ դպրաց դասու անդամները: Առ ի չգոյժ մնալուն հոգեւոր հովիւի, Տ. Նարեկ Վրդ. կ'այցելէր Օրլանտոյի ծուխը՝

Honors  
**Mr. & Mrs. Vatche and Tamar Manoukian**  
at its 10th Annual Banquet Celebration



Participating AGBU Committees include:

- Alex Manoogian Center Committee
- Alex Manoogian Center Ladies
- Alumni Association
- Ardavazt Theater Company
- Asbeds
- Generation Next Mentorship Program
- Glendale / Pasadena Chapter
- Hye Geen
- Orange County Chapter
- Resource Development Committee
- San Diego Chapter
- San Fernando Valley Chapter
- Young Professionals
- Special Events Committee

**Saturday, October 17th, 2009**  
Sheraton Universal Hotel  
333 Universal Hollywood Drive, Universal City, California  
Cocktails 7:30 pm Dinner 8:30 pm  
Donation: \$150  
RSVP by October 2, 2009 Kindly contact: AGBU Offices (626) 794-7942  
Hermine Janoyan (818) 388-5918 or Hilda Sinanian (818) 825-8582



# ԳՐԱԿԱՆ

## «ԶԱՅՆ ԲԱԶՄԱՑ...» ԶԱՅՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ

«Զայն Բացմաց...», հատրմ-տիր՝ Գալիֆորնիոյ հայ գրողներու Բանաստեղծներու քաժին:

Խմբագրական կազմ՝ Գրիշ Դաւթեան, Գեորգ Քրիստիանեան, Գարուշ Հարեանց եւ Հարթր Դաւիթեան:

Մեկեմնասութեամբ՝ Հայաստանեաց եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկեայի Արեւմտեան քեմի գրասէր Առաջնորդ Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանին:

«Զայն Բացմաց...»: Զայն Գալիֆորնիոյ պիտի փորձուէի ըսել, եթէ բանաստեղծական ըմբռնողութեան, արտայայտչականութեան եւ հուստեան միասնութիւն մը, համատեղ տեսլականի մը ուրուագիծը շողկապէր ներկայացուած հունձքը, որ ինչ խօսք՝ առատ էր, բայց այնքան անկապ ու խճողուն: Միմիայն բանաստեղծական բաժինը առանձինն կը հաշուէ 34 անուններ, Գալիֆորնիոյ մէջ մէկտեղուած աշխարհի բոլոր անկիւններէն եւ մկրտուած՝ որպէս Գալիֆորնիոյ հայ գրողներ, երբ իսկութեան մէջ, անոնք իրենց կազմաւորումով պէտք էր կոչուէին հայաստանեան, պարսկահայ, սուրիահայ կամ լիբանանահայ գրողներ: Նոր տեսակի երեւոյթ մը ասիկա, որ կրնայ ըլլալ դրական՝ զիրար ճանչնալու, միասնական, - չեմ ըսել միատեսակ, - հայադրոյժ եւ նաեւ Գալիֆորնիոյ առանձնայատկութեամբ ուրոյն գրականութիւն մը ստեղծելու թէպէտ հեռանկարով: Այս գրութեան սեղմ պարունակին մէջ, 34 անուններուն անդրադառնալու անկարելիութեան առջեւ պիտի հարկադրուիմ բաւականանալ քանի մը յատկանշական անուններու վերլուծումով միայն, կանխաւ հայցելով ներողամտութիւնը չանդրադարձուած հեղինակներուն, որոնց մէջ անկասկած որ կան արժանաւորներ ու տաղանդաւորներ:

Ընտրութեան միակ արժեքափոք բանաստեղծութեան անձնական ըմբռնումն ու ճաշակն է, որ կրնայ ընդունելի չըլլալ ոմանց կողմէ: Ընդհանուր առմամբ, կը խորհիմ դաւանած ըլլալ, թէ բանաստեղծութիւնը խոր ապրումի, յոյզի եւ մտածումի ինքնատարկութեան հետ նաեւ անպայման արտայայտչաձեւ է, վայելչագեղ ոճ ու լեզու, պատկեր, գոյն ու թոյր եւ անպայման հաղորդութիւն՝ Համեստափայլ Գեղեցիկին հետ:

Որպէս առաջին փորձ, այս հատորին գաղափարն ու նախաձեռնութիւնը խիստ ողջունելի ու դրական կը գտնեմ, հայ բանաստեղծական անդամատանը ծաղկուն պահելու իր առաջադրութեամբ:

Նախ պիտի անդրադառնամ մեր գեղեցիկ սեռի ձեռքբերումներուն: Յատկանշականը այն է որ ընդգրկուած 34 բանաստեղծերէն 17-ը իրական սեռին կը պատկանին: Ճիշդ կէս առ կէս: Հաւասարութեան սկզբունքը յարգուած է հոս կատարելապէս:

Առաջին նկատառելի ներկայութիւնը Ալիսիա Կիրակոսեանին մասնակցութիւնն է վեց քերթուածներով, որոնք անգամ մը եւս կուզան վկայելու բանաստեղծին հասունութեան հասած նուաճումներուն մասին, հոս տրուած՝ ուժական սեղմութեամբ, ոճական եւ

պատկերային շքեղութեամբ եւ յուզա-իմացական ներգործութեամբ: Սէր, մայրութիւն, գրոյց Աստուծոյ հետ, խորհուրդ, խաղաղութիւն եւ հայրենիք՝ ընդգրկուած են խորաթափանց պեղումով, սեղմ ու դիպուկ ընկալումներով եւ արտաբերուած՝ ամբողջութեամբ արդիական մտայնացումով եւ ոճով: Հոն կը գտնենք սիրոյ իր խտացուած ըմբռնումն ու դաւանանքը: «Սէրը գոյութեան հանձարն է, սիրոյ հակառակն ամենեւին էլ չսիրելը է, այլ՝ մահ է պարզապէս», կը հուշակէ Ալիսիան եւ մեզի կը փոխանցէ սիրոյ խորհուրդ խորինը, զայն ընդունելով թեւաբաց, որովհետեւ՝

«Բաց թելեր՝  
Նախաբան են գրկումի:  
Բաց թելեր՝  
Նշան են ազատութեան  
Բաց նաեւ կերպարն են տանջուած քրիստոսի:

... Սէրը քիմիական մի շարժում է միայն,  
ուր քաշողականութիւնը պատահում է արեան ռիթմի մէջ,  
ուր մարդու ծնունդն իսկութեամբ շարժում են իրենց միւս իսկութեամբ: Հարազատ մի ալքիմիա է ուր հոգիները ձուլուում են հանդիպման պահին:  
Մի «ես ու դու» է յոգնակից այն կողմ, տիեզերք է՝ մի հսկայ «մենք»ի»:

Հոս, մտածում է եւ յուզում, կողք կողքի, խիտ եւ դիպուկ՝ կը ստեղծեն հրաշածին պահ, ուր կ'ընկալենք սիրոյ հուստեան իմաստն ու խորհուրդը, գորս «ընդունակ են տեսնելու եւ հասկնալու հոգիները սաւառնող»: Խորհուրդի խուզարկումէն մինչեւ աստուածութեան հետ հաղորդակցութիւն տրամաբանական ելակէտն է, երբ բանաստեղծը դժգոհ մարդկութեան վիճակուած անդհանրներէն, ջարդ ու սպանդէն եւ անարդար հարկադրանքներէն, գրոյցի կը նստի Աստուծոյ հետ որ անպայման ունի մարդկային դիմագիծ:

«Եւ Աստուած առանց հողաթափերի իմ ննջարանը մտաւ գիրքով», «Բոպիկ էր Աստուած»: Ուրեմն ոչ որպէս ասեղ, անմատչելի ու դաժան Եհովա, այլ՝ բարեգութ եւ անոխակալ՝ որուն հետ կարելի է գրոյցի նստիլ եւ ակնկալել դեղ ու դարման՝ մարդկութեան բոլոր ցաւերուն համար:

«Օգնի մեզ որսալ ակունքը ճշմարտութեան, Ողորդի մեր նրա էութեամբ որ կարողանանք մերժել արմատները չարիքի: Հարկ է նորից բաժանել երկինքը երկրից, որ խաթարուող բուժես: Թո՛ղ որ հաւաքեն, Սէր, չգործածուած ժպիտներ եւ նորոգիր ներկայութիւնդ պայծառ:

Անմխիթար ժամերին երբ բանտում է հոգին,

Մի պատուհան ենք գծում պատի վրայ ու մի ճառագայթող արեւ եւ մոռանում ենք

Թէ կան պատուհաններ որ չեն բացուում եւ արեւներ, որ չեն տաքացնում:

Թող որ մազլցնմ դէպի լոյս, առանց մարմնի ժպիտ դառնամ

Եւ մի ակնքերթուածներով նետուեն այս մոլորակի վրայ ու ոտից գլուխ բաժանուեն ամենքին»:

Համայնական նուիրումի այս

ուխտով Ալիսիան որպէս տեսլապաշտ բանաստեղծ կը բիւրեղացնէ մարդկութեան, տիեզերապաշտութեան, խաղաղութեան եւ բնապահպանումի իր կոչումը, ամրակուծ եւ շքեղ բանաստեղծական արուեստով ու կառուցողով:

Յաջորդ ընտրութիւնն է սթեր Դաւիթեանն է, այս անգամ «խոռվեալ» մարդոց երգիչը: Նախ, լսենք զինք.

«Գնուած ժպիտին ես չեմ հաւատում,  
Ուրիշ հրաշք են այսօր երագում  
Երջանկութեան կարճ մի քանի վայրկեան  
Այս առաւօտ ես նրանց պիտի տամ,  
Որ բարեւ Աստուծոյ չեն տալիս առնում,  
Սշուշն է միայն աչքերից յառնում...  
Եւ կարմիր վարդս անսակարկանգին,  
Պիտի լոյս բերի մթագնած դէմքին»:

Բարիք ու սէր բաշխելու մեծարենցեան գեղեցիկ աւանդութեան շարունակութիւնն է էսթերին այս ձգտումն ու կոչումը, հրամցուած նորովի, ծաղկաբաշխումի պատկերով: Տառապող, անժպիտ մարդոց երջանկութիւն ցանկալ: Պատճառներէն մին այս վէրքին, ըստ բանաստեղծին, նաեւ «աչքածակութիւնն» է, ազահութիւնը կարգ մը մարդոց.

«Աչքածակ բառի վերջին տառերը ահա ես ջնջում  
Փորձում եմ տեղը արեւն նկարել: Եւ գիտե՛ք ինչու,  
Որ աչքերը գոյգ խոռոչ չլինեն,  
Լոյս ներձառագեն  
Ու երկու շափերի ման բարութիւն ցոլան»:

Էսթերին մօտ մարդկայնական թրթռացումներու արձագանգի կողքին, նոյն ուժգնութեամբ նաեւ կը գտնենք հրաշագեղ բնութեան գովքը՝ որպէս կեանքի ակնադբիւր եւ կեանքը գեղեցկացնող, տանելի դարձանող շնորհք ու պար-

գեւ:  
«Ի՞նչ իրարամեծ, իրարու հակառակ  
Տարրերի խառնուրդ ու միասնութիւն՝  
Յոյ, օր, ջուր, կրակ միաժամանակ,  
Ի՞նչ անբաւական ներդաշնակութիւն...  
Դու յաւերժական ակունք ու աղբիւր»:

Էսթերի լեզուն պարզ է ու սահուն, յղկուած բայց պատկերաւոր: Իր տողերու ընդմէջէն կ'արտահայտուի նուրբ ջերմութիւն մը որ կը վարակէ ընթացողը յուզումով եւ կը մղէ հոգեկան թռիչքի, երազանքի:

Տարբեր խառնուածքի եւ տարբեր յղացումներու բանաստեղծն է Սոնա Մկրեան: Բնորոշիչ կը գտնեմ վեցտողանի «Կարօտներս» վերնագրուած սոյն բանաստեղծութիւնը.

«Կարօտներս փնջեցի  
Կրծքիս դրի, օրրեցի,  
Նրանք մէկ մէկ թեւ առան,  
Թռան հեռու, ետ չկան,  
Եւ՝ անկարօտ մնացի,  
Նրանց կորուստը լացի»:

Անսեթեթ ու ու անպաճոյճ՝ բայց ճշգրիտ բառերով տրուած են հոս մթնոլորտ, յոյզ, մտերմութիւն, ջերմութիւն, ապրում եւ միտք: Հեռու հայրենասիրական ձոռոճ շաղակրատանքէ, հոս խտացուած է հայու կարօտախտը՝ պարզ ու համեստ տարագով, բայց այնքան ստաւուչ պատկերացումով: Նոյն յատկանիշները կը գտնենք նաեւ անոր «Երեւի» վերնագրուած քերթուածին մէջ, միայն այն տարբերութեամբ որ երկուական տողերով այլազան հոգեվիճակներ կամ երեւոյթներ քանդակուած են, միշտ սեղմ ու ներհուն յուզականութեամբ թրթռուն: Այսպէս՝


«Ինչ որ մէկը մոռացել է բոյրը մանուշակի  
Ոտկերի տակ մէկը՝ փնտռում է փշուրներն իր կեանքի...»

Շարք էջ 17

Announcing the new private practice of

**ISSAC HADDAD, M.D.**

Pediatrics and Adolescents



2990 E. Colorado Blvd., Suite 105C  
Pasadena, CA 91107  
Tel: 626/793-3700  
Fax: 626/793-3702



# «ԱՐՄԵՆԻԱ»Ն ՍԱՆՏԻԿՈՅԻ ՄԷՉ «ԱՌՆԵՏԻ ՍԸ ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆԸ»

## ԱՐԱՔՍԻԹԱԹՈՒԼԵԱՆ

Հինգշաբթի օր մըն էր, գրեթէ նման միևս հինգշաբթիներուն: Հեռաձայնային զանգ մը, փոխեց օրուան տաք ու ճնշիչ մթնոլորտը:

Մարի Եայիբեան, Տէր Տաթև-ւին կը հարորդէր «Արմէնիա» նաւուն ժամանումը Սանտիեկոյի ծովափը եւ ինք արդէն պատրաստութեան մէջ էր երեկոցեան ընթրիք պատրաստելու «Արմէնիա» առագաստանաւուն ութը այցելուներուն համար:

Անշուշտ հարց ու պատասխանէն իմացանք որ «Արմէնիա» առագաստանաւի ղեկավարը հայրենի գրող, մտաւորական, Հարաբարի շարժման կեդրոնական ղեմք, Զօր Բալայեանն էր: Ութը այցելուներուն միայն եօթը առագաստանաւուն մէջ էին, իսկ ութերորդը, մեր անմահ հայ գիր ու գրականութեան ստեղծիչը, պանծալի ուսուցիչ, Սուրբ Մեսրոպ Մաշտոցն էր, ոգին ու հոգին սոյն խմբակին:

«Արմէնիա» առագաստանաւի ծրագրին մէջ էր խարսխելու Սան Տիեկոյի shelter island քարափը: Դժբախտաբար թէ բարեբախտաբար առագաստանաւը կանգ պէտք էր առնէր որպէսզի նորոգուէին բաւական վնասուած նաւուն որոշ մասերը, ուրկէ ծովուն ջուրերը կաթիլ-կաթիլ ներս կը թափանցէին:

Չարաճճի առնէտ մը (վստահաբար հայ էր) ներս սպրդած էր ինչ-ինչ պատճառներով եւ սկսած էր կրծել, խողովակներ, տախտակներ եւ ինչ որ ձեռքը անցած էր: Վիճակով կարելի էր նաև գնացուցիչները շարունակել: Մինչ որ առնէտը կամ առնետներ բռնուէին եւ ծակած ու ճաթած խողովակներն ու փայտերը ձեւովէին ու վերանորոգուէին:

Աշխոյժ ու պիտանի Միհրանը, ամէն օր Լոս Անճելոսէն գործը թողած, գործիքներ ու անհրաժեշտ եղող իրեր հաւաքած, կու գար եւ կ'օգնէր վերանորոգելու առագաստանաւը: Այս իսկ պատճառով նաւը 5 օր մնաց ծովափին, բարձր բռնած իր հայկական դրօշն ու «Արմէնիա» անունը տատանելով ու ծփալով հովին ու ծովին շաշիւններէն:

Հինգշաբթի, 27 Սեպտեմբերին, երեկոցեան, Ս. Յովհաննուկարապետ եկեղեցւոյ սրահին մէջ հաւաքուեցանք ճոխ ու առատ սեղաններու շուրջ, իմեցինք կենացը հայ ժողովուրդին, երգեցինք ու արտասանեցինք: Բարեմաղթութիւններու շարքը երկար էր: Տէր Տաթև Ա. Քհնյ. Թաթևեան, հոգեւոր հովիւր սոյն եկեղեցւոյ, իր ողբերգական հաղթանակէն խօսքերով այսպէս պատգամեց: «Մենք առաքելական սուրբ եկեղեցւոյ գաւակներ, թրծուած Սուրբ Էջմիածնի անուշաբոյր միւսնով, ալեհեր Արարատի խորհրդով ու ետ տուն դարձով, հայրենիքով, միախառնուած մէկ ազգ, մէկ հայրենիք եւ մէկ եկեղեցի, սփիւռք ու հայրենիք գոգուած իրարու պիտի կերտենք աւելի մեծ

ու շքեղ հայրենիք մը:

Զօրի Բալայեան կենաց առաջարկեց, խմելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառի արեւշատութեան եւ նորանոր վերելքներու ի փառս եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդին: Ներկայացուց առագաստանաւի անձնակազմը եւ հրաշալի բացատրութեամբ տեղեկացուց սոյն արշաւին նպատակը:

Ուրբաթ, երեկոցեան դարձեալ հանդիպեցանք Զօրի Բալայեանին, Տօթ. փրոֆ. Յակոբ Աբիսքալ եւ իր ազնիւ տիկինը Քնար, միասին ընթրեցինք ծովափին, մտերմիկ ու բանիմաց զրոյցներով, ուրախ ու գուարթ երեկոյ մը վայելելով:

Կիրակի, 27 Սեպտեմբեր, Սուրբ եւ Անմահ պատարագէն ետք, հարիւրաւոր հաւատացեալներ ուղղուեցան ղէպի քարափ, ողջերթ մաղթելու նաւագնացներուն: Սքանչելի էր տեսարանը, տեսնել յուզումնախառն ղէմքեր, ծափահարութիւններ, ծաղկեփունջեր: Հայ եկեղեցւոյ երիտասարդաց միութեան կողմէ նուիրուած փուչիկներ եւ ծաղկեփունջեր: Վարդանանց Ասպետները սիրուն զամփիւռի մէջ զետեղուած կարմիր նուռեր նուիրեցին ի նշան հայ ժողովուրդի բազմածնութեան: Եկեղեցւոյ հաւատացեալներու կողմէ նուիրուեցան նաեւ յուշանուէր մը «արծաթեայ առագաստանաւ մը»: Կեցցէներ, հպարտութեան ալիքներ կը բարձրանային ամէն կողմերէ:

Սուրբ Յովհաննուկարապետ եկեղեցւոյ հովիւր՝ Տ. Տաթև Ա. Քհնյ. Թաթևեան բարձրացաւ առագաստանաւ, եւ կատարեց «տուն-օրհնէք»: Սթիւ Գրաճեան, Վարդանանց ասպետներու սպարապետը, անգլերէն լեզուով արտայայտուեցաւ եւ շնորհակալութիւն յայտնեց «Առագաստանաւի հերոսներուն»:

Յանկարծ «Արմէնիա» առագաստանաւը բարձր բռնած հայկական դրօշակը նագանքով ու հեզասահ, հեռացաւ քարափէն ներկաներու ուրախութեան, հպարտութեան, հուռաններու տարափին տակ:

Մեր շարաճճի առնետները թակարդի մէջ ինկան թէ ոչ լուր չունինք: Այս անգամ շնորհակալութիւն յայտնելու ենք որ մեզ այս գեղեցիկ, մշտանորոգ հայութեամբ վերստին լիցքաւորուած անմոռանալի օրեր պարգեւեցին մեզի:

Միտքս ինկաւ Ուիլիամ Սարոյեանի մէկ գրութիւնը առնէտի մասին, ուր կը նկարագրէ հայուն ճարպիկութիւնը, իմաստութիւնը եւ խելօքութիւնը:

Թէեւ հսկաներ կ'ուզեն մեզ կուլ տալ, բայց մենք հայերս, որ աստղի ներքեւ ալ գտնուինք ինչ ճնշումներու, զուլումներու, տանջանքներու, բանտերու, զնտաններու, կախաղաններու, ծարաւ ու անօթի միշտ կը վերակենդանանանք ու երբ երկու հայ քով քովի կու գան դարձեալ կը շինեն ու կը կերտեն եկեղեցի, դպրոց, մամուլ ու գաջն կը կոչեն «Արմէնիա» Հայաստան:

# ՏՈՆԱԿԱՆ ՂՕՂԱՆՉ

## Մարուակուած էջ 13-էն

անցած տարուամ ովքեր ինչ ստեղծագործութիւններով կարող են հանդէս գալ: Հետեւեալ ներկաները հանդէս եկան իրենց ստեղծագործութիւններով:

Գարուշ Հարեանց՝ «Համաներում»: Արաքս Նաւասարդեան՝ «Յուշերիս մէջ»: Ռ. Կորիւն՝ «Հոկտեմբերը՝ Մշակույթի Տօն»: Գէորգ Քրիստինեան՝ «Իմ ժողովուրդը» եւ «Երգերիս մէջ»: Ալբերտ Գրքաշարեան՝ «Առաջին զանգ», «Վիկտոր Համբարձումեանին ձօն» եւ «Նամակ Արցախի գոհուած հերոսներին»: Գարեգին Միլիթարեան՝ «Հոգեւոր ներշնչումներ»: Արծրուն Ալեքսանեան՝ «Իմ ժողովուրդը»: Երուանդ Իսկանդարեան՝ «Չարենցապատում» եւ «Տէր ներող եղիր»: Աստղիկ Թոփչեան՝ «Կոմիտասին»:

Ընթերցումների աւարտին հանդիսավարը իր մտորումները օրուայ հանդէսի մասին այսպէս բանաձեւեց՝ «Դժգոհութիւն պիտի յայտնեմ, որ դաշիւճը լիք էր, ինչո՞ւ մենք չենք յաջողում մեր հանդիպումները մասայական եւ զանգուածային դարձնել, պակասում է երիտասարդ ստեղծագործողների ներկայութիւնը, դրանով հանդերձ որ մենք շատ շնորհալի երիտասարդ գրողներ ունենք համալսարաններում, նրանց պէտք է գրաւել եւ մասնակից դարձնել»: Նա երկու հոգու պարգեւադրումը միութեան յաջողութիւններից նկատեց: Այնուհետեւ նա ի խորոց սրտէ

ցաւ յայտնեց, որ գրքերը անտեսուում են, չեն կարդացուում, չեն գնահատուում, այս անտարբեր վիճակը որակեց՝ «Գրքերի ցեղասպանութիւն», որը աւելի ողբալի նկատեց, քան մարդկանց ցեղասպանութիւնը»: Նա գրքի վերաբերեալ տալով իր գնահատականը ասաց՝ «Գրքերը մեր կեանքն են, գրքերը՝ մեր պատմութիւնը, մեր ապագայի՝ խորհրդանիշը, մեր օրերի՝ երգը»: Ապա նա հրաւիրեց միութեան նախագահին երեկոյի փակման խօսքն ասելու:

Նախագահն եւս նկատողութիւն դարձրեց ձեռնարկին ընդառնողների ոչ հոծ ներկայութիւնը, ապա նա Մշակույթի Տօնի մասին տեղեկութիւններ փոխանցելով ասաց՝ «Մշակույթի Օրը աւանդաբար միջնադարից սկսեալ տօնուում է Հոկտեմբեր ամսայ երկրորդ շաբաթ օրը, եկեղեցական նշանակումով է եղել, սա թարգմանիչների տօնակատարութեան օրն է»: Նա անդրադառնալով թարգմանիչների դերի մասին ասաց՝ «Մեսրոպ Մաշտոցը եւ Սահակ Պարթևը իրենց աշակերտներով թարգմանեցին Աստուածաշունչը, որը այլոց գնահատականով կոչւեց՝ «Թագուհի Թարգմանութեանց», սա մեծ նուաճում էր հայերիս համար»:

Ելոյթների բաժինը իր լրումին հասաւ:

Ներկաները մասնակցեցին հիւրասիրութեան:

Նրանք աստիճանաբար թողեցին սրահը՝ անկասկած օրուայ խորհրդով տպաւորուած:

# ՄԱՍԻՍ

## ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax : -----

---

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:

G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104  
Norserount@sbcglobal.net

---

**ՄԱՍԻՍ**

ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**

## «Մասիս» Հարաբարթերփին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863



### ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Արուֆին, Յարուֆին.

Յունիս 14, 1722, Թիֆլիս - Սեպտեմբեր 22, 1795, Թիֆլիս

Միջնադարեան հայ բանաստեղծ-աշուղ: Ամենայն չաւանականութեամբ Սայաթ-Նովայի նախնիները Թիֆլիս են եկել Կիլիկեան Հայաստանից:

Սայաթ-Նովաների ընտանիքը Թիֆլիսի քաղաքային արհեստաւորներէից էր:

Սայաթ-Նովայի երգերի բնաւորութիւնը հեղինակ Յովհաննէս Թումանեան տպագրուել է «Հորիզոն» թերթում, 1913, Մայիսի 25, էջ.113:

Եւ ի՞նչ գեղեցիկ է, ճշմարիտ, որ հայէս է մեր վիթխարի Սայաթ-Նովան. մի հոյակապ սիրահար է, բռնուած ու բռնկած սիրոյ հրեշտակ, նրա լուսի տակ էլ նկատուած է աշխարհքն ու իրերը, գգուած է, որ էրուած, վերջանուած է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու վսեմ, որպէս աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը, հաստատուն սիրով եւ դէպի էն «գալուածը», որ իրեն կրակ տուեց ու միշտ մնաց անտարբեր, եւ դէպի նրանց, որոնք չորս կողմից տաքացան ու հրճուեցին էն կրակով, որի մէջ էրուած էր ինքը, եւ դէպի նրանց, որոնք հազար ու մի տեսակ իրեն վշտացրին կեանքում: Զայրացաւ, բայց երբեք չչարացաւ, ցաւեց, բայց երբեք չանիծեց:

Ռուս յայտնի բանաստեղծներէից մէկը, որ երեւի Մոսկուայում մեր Գեորգ Ախերզեանի ուսանողական ընկերներէից է եղած, անցեալ դարու յիսնական թուականներին Կովկաս եղած ժամանակ Ախերզեանի մօտ տեսել է Սայաթ-Նովայի երգերի տետրակը, նրա միջոցով ծանօթացել Սայաթ-Նովայիօ հետ եւ երգերից մի քանիսը թարգմանել, հրացմունքով է խօսում մեր Սայաթ-Նովայի երգերի բնաւորութեան վրայ: Ասում է՝ Սայաթ-Նովայի երգերի բնաւորութեան մասին ընդհանրապէս խօսելով, դժուար թէ սխալուեմ, եթէ ասեմ, որ նրանք իսկի նման չեն ոչ հարեւան ցեղերի երգերին, ոչ էլ էն երգերին, որ եկել են Արեւելքից, թէեւ յիշեցնում են նրանց: է՛սպէս, օրինակ, կովկասեան բոլոր լեռնական ժողովուրդների երգերի ոգին ռազմական է: Ձին ու թուրը, սէրն ու վրէժը, արիւնն ու սպանուածի դիակի վրի ողբն են նրանց երգերի յատկանիշները:

Սայաթ-Նովան հեռու է կրուից, Գուրգիստանի լեռներում ապրող վանա հայերի ռազմական ոգին չէր

կարող նրան ոգեւորել, նրան, որ ծնուել էր Թիֆլիս, ուր, օտարութեան մէջ, հայերն առել էին ուրիշ բնաւորութիւն, ուրիշ ուղղութիւն:

Թաթարական երգերում պատմուածքը վերջին տեղը չի բռնում: Նրանցից շատերը լեզենդի բնաւորութիւն ունեն, շատերն էլ կարծես թէ ինչ-որ անյայտ ժամանակներից եկած ու անյայտ երգիչների երգած՝ երկար պոեմների հատուածներ են, ինչպէս օրինակ Քեռու-Օղլու - իր ձիու երգը: Սայաթ-Նովան, ընդհակառակը, զուտ քնարական բանաստեղծ է, եւ, թերեւս, մեր ժամանակի հասկացողութեամբ, չափազանց անհաստական: Վրացական երգերում մեծ տեղ է բռնում սէրը, քեֆը եւ երբեմն անյոյս տիրութիւնը, բայց նրանք կարծես հենց նրա համար են, որ ինքը երգողն էլ, իր լսողներն էլ մի առ ժամանակ, զինու օգնութեամբ, մոռանան ամէն ցաւ ու դարձ ու նրանց հնչիւնների մէջ գտնեն միութարութիւն:

Սայաթ-Նովան ընդհակառակը միութարութիւն չի ուզում, նրան աւելի դուր է գալիս, երբ ծիծաղի տակ արցունք է նկատում, քան երբ լսում է ծիծաղը, որ արցունքը ճնշում է:

Նրա երգերը յաճախ հանդիսաւոր եւ խրատական են: էնպէս եւ նա իր սրտին ասում է.

«Արի ինձ անգաճ կալ, ա՛յ դիւանա սիրտ, Հայա սիրէ, աղաբ սիրէ, եար սիրէ».

Աշխարքըս քունն ըլի, ի՞նչ պիտիս տանի, Աստուած սիրէ, հորի սիրէ, եար սիրէ»:

Սայաթ-Նովայի երգում քիչ կան էն վառ փայլուն գոյները, որոնցից Արեւելքում բնութեանը յաճախ առնում է մի տարօրինակ ու խաբուսիկ արտաքին փայլ: Չկան եւ էն ֆանտաստիկ պատկերները, որոնց ասես թէ հաշիշն է ծնում: Առհասարակ նրա երգերում քիչ երեւակայութիւն կայ եւ շատ զգացմունք: Եւ էդ զգացմունքները նրա երգերում մեծ մասամբ արտայայտուած են էնքան մեղմ ու անվրդով խաղաղութիւն, որ նրա սէրը նման է ընկերութեան, ընկերութիւնը սիրոյ: Որ հայրենի քերականութեան մէջ էլ արականի ու իգականի տարբերութիւնը չկայ եւ Սայաթ-Նովայի մի քանի երգերում դժուար է հասկանալ, իր

ոգեւորուած խոսքով ում է դիմում նա՝ քնքոյչ սիրով սիրած ընկերին, թե տարփալի սիրով սիրած կնոջը: Նրա հոգու տարրը, ոգեւորութեան ժամերին, չի կարողանում հաշտուել զգայնակալութեան հետ, ինչպէս կրակը չի կարող հաշտուել ջրի հետ: Նա էնքան է բարոյական, որ աշուղի կոչմանն էլ նայում է բարոյական տեսակէտից: Իր երգերից մէկի մէջ ասում է. «Աշուղի լիզան բըլբուլ է, օրհնանք ուն», անէծք չունի, թէեւ երբեմն նրան համակում է սոսկալի թախիծը: Իհարկէ, իր հարեւանցի ծանօթութիւնով ու ամեն տեսակի խորթութիւնով, ռուս բանաստեղծի համար դժուար էր ըստ ամենայնի ճիշտ ըմբռնել ու հասկանալ առհասարակ մեր եւ մասնաւորապէս Սայաթ-Նովայի ստեղծագործութիւնն ու հոգին, բայց նա էլ է նկատել, եւ նրա կարծիքն ու տպաւորութիւնը մէջբերի շեշտելու Սայաթ-Նովայի երգերի բնաւորութեանը, որոնց պարզութեան մէջ ակնյայտ է նրա բարի, քնքոյչ սիրտը ու նրա ազնիւ, խորը հոգին, եւ էդ ամէնը միանգամայն առողջ ու ամբողջական:

Մի առողջ, ոգեւորուած բանաստեղծ, որ աշխարհք է մտել սագով ու սիրով, ինչպէս ինքն է ասում իր անտիպ թրքերէն երգերից մէկի մէջ՝ «Ջունուն օլմիշ, ոգեւորուած խոսքով ում է դիմում նա՝ քնքոյչ սիրով սիրած ընկերին, թե տարփալի սիրով սիրած կնոջը: Նրա հոգու տարրը, ոգեւորութեան ժամերին, չի կարողանում հաշտուել զգայնակալութեան հետ, ինչպէս կրակը չի կարող հաշտուել ջրի հետ: Նա էնքան է բարոյական, որ աշուղի կոչմանն էլ նայում է բարոյական տեսակէտից: Իր երգերից մէկի մէջ ասում է. «Աշուղի լիզան բըլբուլ է, օրհնանք ուն», անէծք չունի, թէեւ երբեմն նրան համակում է սոսկալի թախիծը: Իհարկէ, իր հարեւանցի ծանօթութիւնով ու ամեն տեսակի խորթութիւնով, ռուս բանաստեղծի համար դժուար էր ըստ ամենայնի ճիշտ ըմբռնել ու հասկանալ առհասարակ մեր եւ մասնաւորապէս Սայաթ-Նովայի ստեղծագործութիւնն ու հոգին, բայց նա էլ է նկատել, եւ նրա կարծիքն ու տպաւորութիւնը մէջբերի շեշտելու Սայաթ-Նովայի երգերի բնաւորութեանը, որոնց պարզութեան մէջ ակնյայտ է նրա բարի, քնքոյչ սիրտը ու նրա ազնիւ, խորը հոգին, եւ էդ ամէնը միանգամայն առողջ ու ամբողջական:

Մի առողջ, ոգեւորուած բանաստեղծ, որ աշխարհք է մտել սագով ու սիրով, ինչպէս ինքն է ասում իր անտիպ թրքերէն երգերից մէկի մէջ՝ «Ջունուն օլմիշ,

սագ ալընդա չալան դըր Սայաթ-Նովա».

Սայաթ-Նովա Աշխարհքս մէ փանջարա է, Թաղերումեն բեզարիլ իմ. Մըտիկ տըրուղըն կու խուցուի, Դաղերումեն բեզարիլ իմ. էրեզ լաւ էր, քանց վուր էսօր, Վաղերումեն բեզարիլ իմ...

Սակայն տանջուելով ու վշտանալով հանդերձ եւ տանջանքից ու վշտերից բեզարելով հանդերձ՝ միշտ էլ մնում է նույն բարին, քնքոյչ ու ազնիւր եւ ինչ բանաստեղծական գեղեցկութեամբ կեանք ու աշխարհք էր մտել, նոյն գեղեցկութեամբ էլ թուշում է կեանքից ու աշխարհքից:

«Գուզիմ թըւչի բըլբուլի պէս, բաղերումեն բեզարիլ իմ...»: Մի ամբողջ ժողովրդի պարծանք է Սայաթ-Նովան, անմաշ ու անմահ: Ով նրան մին լսեց, միւս անգամ աւելի սիրով կը լսի, ով նրան մին սիրեց, էլ չի դադարի սիրելուց:


Շարունակելի

**«ՈՂԲԱՍ ՄԵՌԵԼՈՅ»**  
Թեիրան-Երեւան Օդային Վթարի Ձոհերին...  
Ն. ԲԱԼԱՅԵԱՆ

«Ողբամ Մեռելոց», Որոնք չունեցան իմ պապերի պէս Շիրիմ, շիրմաքար, Հող էին, Դարձան Սոխիթ, սրբահող, Յար անջնջելի Յուշ ու յիշատակ... Ահաւոր աղէտ.	Սրտերը խոցուած Բեկուած հոգիներ. Աչքերը ցամքած... Արցունք չմնաց Ողբը ողբալու, Ողբն համայն հայոց, Ողբն ամենեցուն, »Ողբամ մեռելոց«, Ողբամ մեռելոց...»:
---	---

**ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ**  
ՀԵՌՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ  
ԺԱՍՆԱԿԱՑՈՅՅԸ

CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ  
(ԿԼԵՆՏԷՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)  
GLOABCAST SATELLITE  
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎԱՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00



**WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT**

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՄԵՆԱՀԱՄԵՂ ԾԱԾԱՏԵՍԱԿՆԵՐ:  
ՈՒՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԲԱՅՕԴԵԱՅ ՆՍՏԵԼՈՒ ԲԱԺԻՆՆԵՐ  
Բաց է Ծաբաթը 7 օր: Ունի յատուկ սրահ հաւաքոյթներու

**(626) 281-1006**  
**(626) 576-1048**  
**910 E. Main Str. - ALHAMBRA, CA**



«ՁԱՅՆ ԲԱԶՄԱՑ...»

Շարունակում էք 14-էն

Ինչ որ մէկը կորցրել է ճամբան դարձի:

... Ինչ որ մէկը իմ լեզուով է լռում:

Թէ չէ սիրտս ինչու է այսպէս դողում»:

Գէորգ Քրիստինեան բանաստեղծը ներկայացնելու հարկ կա՞յ արդեօք, երբ Գալիֆորնիայի քերթողներին ամենէն տիպական գալիֆորնիականն է ան. իր պարագային, երեւոյթը այն է որ ան սնած, աւիշաւորութեամբ հայրենի հողով ու ջրով, կազմաւորուած հայրենի բնութեան հետ սերտօրէն շաղուուելէ ետք, երբ կը հարկադրուի պանդխտութեան դիմել, հոն երկնուած իր կարօտի երգերը ամբողջութեամբ կը տարբերին մեր միայն հեռուէն, յաճախ նոյնիսակ չտեսած հայրենիքի կարօտեղբուրդներէն, այսինքն, մերինին նման գրքունակ ու երազային, ' չըսելու համար երեւակայածին, ' ըլլալէ հեռու կը մնայ ան, եւ կը բերէ հարազատութեան տաք շունչին հետ նաեւ հայրենի հողին ու բնութեան ֆիզիքական, իրաւ ու ճշգրիտ պատկերացումն ու բարեխառնութիւնը՝ հայ ոգիին տեսլականով օծուն: Այսպէս, հողը լոկ կաւեղէն նիւթ ու բաղադրութիւն չէ իր մօտ, այլ վսեմական խորհուրդ ու սրբութիւն՝ ուրկից ոգեղէն հրաշքներ կը ծնին.

«Ի՞նչ գարմանալի աշխարհ է, Աստուած, Հողը փորում են՝ գիր է դուրս գալիս, Մեր Սուրբ Նարեկը ծաղկել է հողից: Հայրենները ծիրան են հասած: Հողը պեղում են՝ երգ է դուրս գալիս: Քարերը այստեղ մորմոք են սանած, Ծառերը՝ փափուկ օրոցք մանկական»:

Ոգեղինացման այս կախարդանքը փոխանցել մեզի ուրիշ սիրանք մըն է, որուն բանաստեղծութեան հրաշք անունը կու տանք:

Անշուշտ, կարօտաբաղձ այս երգերուն միւս դրդապատճառը պանդխտութեան հետ նաեւ խորթ միջավայրն ու դժնի ժամանակներն են, ուր ապրիլ հարկադրուած է բանաստեղծը:

«Մեր օրերում կուչ է եկել ժամանակը, կօկուծել է խճուել ժամացոյցիս անիւներին, ու տնքում է սրտիս մամն...»

Տիեզերքն է փքուել անսիրտ ու տարածուել քաղցկեղի պէս, Արեգակի եւ աստղերի ցաւն է լցուել տիեզերքի խորաններում, Երկրագունտը՝ սմբած, կքած ու փոքրացած, ցանցն է ընկել Լկտիացած այս մարդկութեան, հիւլէական պայթիւնների Աիը սրտում, գլխապատառ ուղեծիրից դուրս է ընկել»:

Առանց սիրոյ ի՞նչ բանաստեղծութիւն, պիտի փորձուինք ըսելու եթէ չանդրադառնանք այդ երեսին ալ: Գողտրիկ, կարճ բայց նուրբ նմոյշ, մը տեղադրուած է հոս, այնքան յատկանշական բանաստեղծին սեղմ ու վճիտ եւ նոյնքան ալ ջերմ ոճին:

«Քո մատները, Մատներդ երգում են ասես, Մատներդ խօսում են ինձ հետ, Մատներդ պարում են ասես, Մատներ կրակ են հրկէզ...»

Մատներդ հրաշք են գործում, Մատներդ օրօր են անում, Մատներդ աստեղերը վառած՝ Իմ սիրոյ պալատն են մտնում»:  
Ամէն մէկը տողը հոս սիրոյ եւ սիրածին մէկ երեսն ու պատկերը կը կերտէ քմայքով եւ թաքուն հիւմըր երգիծանքով թաթաւուն: Վարպետութիւն եւ վերասլացութիւն միանգամայն: Քնարական յորդ լիցք եւ քնարաշունչ լարեր՝ Քրիստինեան բանաստեղծը կը բաղկացնեն:

Գրիշ Դաւթեանը որ այս հատորին կազմութեան գլխաւոր նախաձեռնողն ու իրականացնողը եղած է, եւ ծանօթ է որպէս գալիֆորնիայի գրողներու միութեան նախագահը եւ կլենտէյլի հանրային գրադարանին մէջ տարիներէ ի վեր անխափան ամսական գրական հաւաքոյթներուն կերտիչը, այս հատորին բերած է առաւելապէս իր սիրէր գութիւնները, որոնք քննաշննարկ, քնարականութեան եւ երազանքի թեւածումներու կողքին, ունին իրապաշտական մտեցումներ ալ: Քնարական շունչով տրուած իր տողերը, զգացական ապրումներով երազի, մտերմութեան եւ ջերմութեան պահեր կը ստեղծեն.

«Երեւա՛ ծառուղում, վրդովիր ստուրների միջքը եւ արտորանքով մօտեցիր մեծութեանս»:

կամ  
«Մանուշագոյն թերթերով մա մի ծաղիկ է դալար, եւ մի աղջիկ է քնքոյշ, մանուշակի պէս բուրեան, եւ մի տեղադրուած շրթերիմ սրտի խօսքեր սիրախոր, Ու մեղրագոյն աչքերում երազներ կան անմամն»:

Ապա՛ խօսքը ուղղելով գարունին, անոր շնորհներուն նշումին հետ նաեւ բաղդատականով կը յիշէ իր սիրած աղջիկը.

«Դու գալիս ես նրա դալար Արահետներով այն գալարում, Որտեղ մա անցել է թեթեւ քայլերով:

... Ես երկրպագում եմ քո ծաղկունքին, Որի վարդաթերթերը մա շաղտուեց իմ կրծքին, Որպէս խանդաղատանք ու երջանկութիւն: Երկրպագում եմ քո նարկիզներին ոսկեբաժակ, Որոնց մէջ լցուած ցօղով, կարօտներին սոխակներն արբեցին»:

Հոգեփոխութիւնը կու գայ հանգրուան առ հանգրուան: Մէրը հետզհետէ կը ձերբազատուի վերացական քնարականութեանն ու կը փոխարինուի առարկայական պատկերացումներով եւ զգացականութիւնն ալ՝ ցանկութեան հրաշքով, գիտակցաբար:

«Հիմա ես էլ առաջումնը չեմ, Հիմա ես էլ չունեմ անրջանք. ... Ես հիմա հազիւ, թէ յիշում եմ. Կար մի լուռ, բայց հրէ մի աղջիկ.

Մոռցուած յուշեր ու թուրքեր Որ չեմ էլ ուզում վերյիշել...»: Կինը ալ վերացական, երազային էութիւն մը չէ բանաստեղծին համար, այլ, հրապուրիչ մարմին՝ իր բոլոր բարեմասնութիւններով: Ու ինք այդ է որ կ'երգէ: Ալ վերջ «հրէ աղջկան», «հին երգի», «անրջանք»ին: Հրէ աղջիկը փոխարինուած է առողջ ու կենդանի «թէժ աղջիկ»ով:

«Դու արեւիս թէժ աղջիկն ես, հուր ես վառել դու իմ սրտում, եւ այդ հուրը մի նոր կեանքի տաք լոյսով է հոգիս լցնում: Գիրք շրթերդ որպէս խաղող, որ հասել է արեւի տակ, Պիմո համբոյրիս՝ մեղրանում են իմ շրթերից ծորով յստակ»:

Այսպէս՝ շարունակելով իրապաշտ պատկերներու շարքը, սիրերգութիւն եւ սեռերգութիւն միաձուլ կը հիւսուին որպէս կենդանի, ջերմ, բաբախուն ապրում ու զմայլանք:

Գրիշ Դաւթեանի բանաստեղծական երազապնակը հարուստ է նաեւ իմացական այլ ներգրաւուումներով, որոնք սակայն դժբախտաբար տեղ չեն գտած այս հատորին մէջ, բացի «Երրորդ Բուռ Հող» քերթուածէն, ուր տիպական մէկ պատկերացումը կը գտնենք սփիւռքի մէջ ծնած եւ ապա պայմաններու բերումով ամերիկեան այս փեբը ինկած հայ մարդու ճակատագրին: Յաջող համարութիւն մը՝ հայրենի առաջնահերթ հողին, ծննդավայրի եւ ապա ներկայի երկրորդ գաղթի երկրի հողերուն, որոնց միջեւ հայ վտարանդի մարդը կը մնայ մոլորուն եւ շուարած՝ որովհետեւ երրորդ հողի պարփակման համար փեբուն մէջ ալ տեղ չունի, երկուքն ալ գրաւուած ըլլալուն:

Գարուշ Հարեանց մեր ուշադրութիւնը կը գրաւէ ձեւական նորարարութեամբ, իր հրամցուցած 12 քերթուածներուն տալով արտաքին նոր դասաւորում մը, որ կը միտի քերթուածին ընթերցումէն առաջ, բառերուն գծագրական դասաւորումով թելադրել նիւթին բովանդակութիւնը: Տեսակ մը տեսողական քերթողութիւն: Ձեւ մը որ թէեւ արդէն գործածուած է 1910-ական թուականներու ֆրանսական գրականութեան մէջ, Կիյոմ Ափոլիներին եւ ապա յետագային, գերիբապաշտներու կողմէ, բայց նորութիւն կրնայ սեպուել մեր մօտ, տրուած ըլլալով որ առաջին անգամ ինք է որ հետեւողական ջանասիրութեամբ կը կիրարկէ տեսողական քերթողութեան այս զրեւածեւը: Ուրեմն պիտի ըսենք՝ աւելի լաւ է ուշ, քան երբեք: Չուտ ձեւապաշտութեան այս կաղապարը սակայն ունի ակնյայտ թերութիւն մը. ձեւին սահմանափակ կիրարկումը յաճախ կ'արգելակէ խօսքին ազատ արտայայտութիւնը եւ մտածումին յստակ սեւեռումը, որոնք չեն համարողուի ձեւին կապաղարումին մէջ: Կը կորսուի բանաստեղծութեան գլխաւոր կախարդանքը՝ յուզական լիցքը, գրութիւնը վերածելով պարզ արձակ շարադրանքի: Ահաւասիկ տիպական նմոյշ մը.

«Արդէն հասանք մեր սիրոյ եւ հայրենասիրութեան յախուռն աւարտին, որ միանիշ թիւերի համակարգով ամբողջացաւ՝ վկայեմ, որ քամին եղաւ խարազան եւ ամբուլը սուրին»:

Այսպէս՝ շարունակաբար: Հաճելի է բառերու տեսողական համարութեամբ տեսնել Հայաստանի եւ Արցախ աշխարհի քարտէսները եւ կամ թուանշաններուն ձեւաւորումը, բայց շատ աւելի նախըտրելի պիտի ըլլար անոնց խորիմաստ ոգիին թափանցել եւ հարողբել մեզի բառերու եւ պատկերներու կախարդանքով:

Ինձի համար յայտնութիւն մը հանդիսացաւ Շահէ Քէօրոյլեանի մատուցած քերթողութիւնը:

Կազմաւորումով եւ ասպարէզով քաղաքագէտ՝ բայց զարմանալիօրէն ուղն ու ծուծով՝ բանաստեղծ է ան: Մեղք որ ցարդ միայն մէկ հատորով հրատարակուած է: Բայց նախ լսենք զինք.

«Ամբողջ աշխարհի սեր կ'երգէ, Իսկ ես սեր կը բաշխեմ: Ամբողջ աշխարհի թատրոն մըն է,

Ու ես այնտեղ կեանք կը փնտրեմ: Ամբողջ աշխարհի դեռ կ'երգէ, Իսկ ես արդէն լռած եմ»:

Պարզ ու հասարակ բառերու շարահիւսութեամբ, սովորական վիճակ կացութիւններու թուումով եւ հակադրութեամբ ան կը ստեղծէ մտածումի նոր ճառագայթում մը, անդրադարձում մը, որ իմաստասիրական խոր եզրայանգումներու կը տանի մեզ: Այս է բանաստեղծութեան իսկական կոչումը:

«Ես ուզեցի կեանք տալ քեզի, Իմ մատներուս հպումներով, փայլալայանքով,

Բայց չի կրցայ, կալ չէիր դուն: Ես ուզեցի որ դուն սրտիս ու մտքիս

առանձնութեան ընկերանաս, մտերմանաս.

Բայց չի կրցար. բաւ չէիր դուն: Ես ուզեցի ըստ իմ կամքիս, Ըստ իմ կեանքիս քեզ ծնիլ Երազիս սեր աղջկան պէս.

Բայց չի կրցայ. երազ չէիր դուն»:

Սիրոյ կատարելութեան ձգտումին դէմ յուսախաբութեան սքանչելի հանգրուաններ տրուած գուսպ, արագ եւ ներգործութեան մղող հակադրական պարզ պատկերներով, որոնք սակայն կ'միաստաւորուին կեանքի իրապաշտ հանգամանքներով եւ մարդու ճակատագրի կարծրութեամբ: Փաստեր՝ որոնք անպայման վկայութիւնն են Շահէին բանաստեղծական խառնուածքին եւ շնորհներուն: Երազանք եւ հիասթափութիւն: Լոյս ու մթաստուեր՝ կողք կողքի:

Բանաստեղծական այս հաւաքածոյն, ցաւով պէտք է նշել բացակայութիւնը գալիֆորնիայի բանաստեղծութեան կարեւորագոյն դէմքերէն ժագ Ս. Յակոբեանին եւ Ջարեհ Մելքոնեանին, ինչպէս նաեւ անունները՝ Վարդերես Գարակէօզեանին, Յարութիւն Մաթեանին եւ մեր շրջանի կրօնաւոր միակ բանաստեղծ՝ Հայր Տաճատ Մ. Վարդապետ Եարտմեանին:

Մի գուցէ, նաեւ ուրիշ անուններ կ'ես...:

REQUEST FOR PROPOSALS (RFP #7523) 2009 CONTINUUM OF CARE HOMELESS ASSISTANCE PROGRAMS The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified organizations interested in providing assisted housing and supportive services through the Section 8 Continuum of Care Homeless Assistance Programs. Copy of the RFP may be obtained beginning October 5, 2009 at www.hacla.org/ps or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted until 2:00 P.M., by October 23, 2009. 10/15/09 CNS-1703627# MASSIS WEEKLY



# ՄԱՐԶԱԿԱՆ

## ՄՊԱՆԻԱՅԻ ՖՈՒՏՊՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԲԱԿԱՆԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ 2-1 ՀԱՇՈՒՈՎ ՅԱՂԹԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ



Հոկտեմբերի 10-ին 2010 աշխարհի ֆուտպոլի առաջնութեան ընտրական փուլի խմբային մրցաշարի ծրագրով Երեւանի Հանրապետական մարզադաշտում Հայաստանի ազգային հաւաքականը հիւրընկալեց Եւրոպայի ախոյեան Սպանիայի ընտրանուկը: Խաղն աւարտուեց 2:1 հաշուով սպանացիներին յաղթանակով: Հանդիպման 34-րդ րոպէին հիւրերից հաշիւը բացեց Ֆրանսեսկ Ֆաբրեգասը, 58-րդ րոպէին Հայաստանի հաւաքականի խաղացող Ռոբերտ Արզումանեանը խփեց պատասխան գնդակը, իսկ 64-րդ րոպէին Խոսեան Մանուէլ Մատտան յտակօրէն իրացրեց գլխաւոր մրցավար Իրփի Եիի (Չեխիա) նշանակած 11 մետրանոց հարուածը:

Հիւրերն իրենց կարգով իրօք բարձր էին մեր ֆուտպոլիստներից, որոնք սպանացիների հետ խաղում ներդրեցին իրենց բոլոր կարողութիւնները:

Սպանիայի հաւաքականը մինչեւ Հոկտեմբերի 12-ը կը մնայ Երեւանում, որտեղից էլ կը մեկնի Չենիցա քաղաք աշխարհի առաջնութեան ծրագրով Պոսնիա Հերցեգովինա թիմի հետ վերջին հանդիպումն անցկացնելու համար: Հայաստանի ֆուտպոլիստները Հոկտեմբերի 12-ի լուսաղբեմին ուղեւորուեցին Թուրքիա եւ Հոկտեմբերի 14-ին Պուրսա քաղաքի ստադիոնում փուլի վերջին խաղում կը հիւրընկալուեն Թուրքիայի ֆուտպոլիստներին:

Յաւելեմք նաեւ, որ Հոկտեմբերի 10-ը պատմական օր է հայկական ֆուտպոլի համար. ուղիղ 36 տարի առաջ՝ 1973 թուականին Երեւանի «Արարատ»-ը Մոսկուայում 2:1 հաշուով յաղթեց Քիեւի «Դինամօ»-ին եւ նուաճեց ԽՍՀՄ գաւաթը:

### ԻՆՏԵՐՎԵՆԸ ՎԱԳՈՆՈՎ ՉԷ

Շարունակուած էջ 6-էն

նի եւ մեկուսացման օգտին:

Դրանք տարբեր բաներ են: Դէմ խօսել արձանագրութիւնների բովանդակութեանն ու խօսել մեկուսացման կողմ, տարբեր բաներ են, ինչպէս որ տարբեր, բացարձակ տարբեր բաներ են խօսել անգամ փակ սահմանի պարագայում զարգանալու եւ առաջ գնալու հնարաւորութիւնների առկայութեան եւ փակ սահմանով զարգանալու նախընտրութեան օգտին: Այդ իմաստով էլ, երբ նշուած է, որ չնայած բաց սահմանով զարգանալն աւելի լաւ է, աւելի հեշտ է, այդուհանդերձ Հայաստանն ունի նաեւ անգամ այս փակ սահմանի պարագայում զարգանալու մեծ պոտենցիալ, ապա անմիջապէս հակադարձուած է, թէ ուրեմն տուեալ դիտարկումն անողները կողմ են փակ

սահմանին: Մինչդեռ, ինդիւսի ընդամէնն աչն է, որ եթէ բաց սահմանը մեզանից պահանջելու է այնպիսի գին, որը կը թուլացնի Հայաստանը քաղաքական եւ աշխարհաքաղաքական առումով, ապա այդ դէպքում պէտք է գնալ դրան, մտածելով, թէ հակառակ պարագայում սովամահ ենք լինելու կամ մեկուսանանք:

Սովամահ չենք լինի եւ չենք մեկուսանալ, եթէ փորձենք կառուցել ժամանակակից արժէքների, օրէնքի, իրաւունքի, ազատութիւնների եւ արդարութեան վրայ հիմնուած պետութիւն: Հետեւաբար, պէտք է հասարակութիւնն իշխանութեանը ներկայացնի այդ պահանջները, ոչ թէ լսի հեքիաթներ, թէ ժամանակն է լայն մտածել եւ ինտեգրուել աշխարհին հայ-թրքական կարգաւորման այս տարբերակը նախընտրելու միջոցով:

## ՍԻԻԶԻ ՔԵՆՏԻԿԵԱՆԸ ՅԱՂԹԵՑ ԹՈՒՐԲ ՄԱՐԶՈՒՅՈՒՆ՝ ՊԱՅՊԱՆԵԼՈՎ ՏԻՏՂՈՍՆԵՐԸ

Թեթեւագոյն քաշային կարգում WBA-ի եւ WIBF-ի վարկածներով աշխարհի ախոյեանուհի Սիւզի Քենտիկեանը պրոֆեսիոնալ ուինգում իր հերթական յաղթանակը տօնեց: Գերմանիայի Ռոստոկ քաղաքում հայ մարզուհին հերթական անգամ յաջողութեամբ պաշտպանեց իր տիտղոսները՝ նուաճելով նաեւ WBO-ի վարկածով աշխարհի ախոյեանի գօտին: Նրա մրցակցուհին Գերմանիայում բնակուող թուրք մարզուհի Եուլի Սահինն էր:

10 ուսունդանոց մենամարտում Սիւզին իրեն հիանալի դրսեւորեց: Նա անընդհատ գրոհում էր մրցակցուհուն՝ ստիպելով վերջինիս անցնել խորը պաշտպանութեան: 35-ամեայ թրքուհին բաւական փորձառու էր եւ կարողացաւ դիմակայել Սիւզիի ուժգին հարուածներին: Սակայն նա ի վիճակի չէր Սիւզիին յաղթել: Մենամարտի աւարտից յետոյ երեք մրցավարներն էլ յաղթանակը շնորհեցին Քենտիկեանին (98-92, 96-94, 97-93): Սիւզին պրոֆեսիոնալ ուինգում 26-րդ յաղթանակը տօնեց՝ մնալով անպարտելի:

### «ՄԻՎԱ»-Ի ՏՂԱՍԱՐԴԿԱՆՑ ԹԻՍԸ 2-ՐԴԸ ԾԱՆԱԶՈՒԵՑ ԾԱԽՄԱՏԻ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՎՈՒՄԲԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ

Հոկտեմբերի 10-ին Մակեդոնիայի ՕՏՐԻԳ քաղաքում աւարտուեց շախմատի Եւրոպայի ախոյեանի առաջնութիւնը: Տղամարդկանց մրցաշարում Հայաստանի «Միկա»ն 12 միաւորով գրաւեց 2-րդ տեղը, կանանց պայքարում 6 միաւորով եզրափակեց լաւագոյն եօթնեակը:

### ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ 6-ՐԴ ԽԱՂԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՍԸ 1 ԱՐԾԱԹԷ ՄԵՏԱԼ ՆՈՒՄԵՑ

Հոկտեմբերի 11-ին Պէյրութից հայրենիք վերադարձան ֆրանսախօս երկրների 6-րդ խաղերի մասնակից հայաստանցի մարզիկները: Ինչպէս «ՆՏ»-ի թղթակցին յայտնեց հայկական պատուիրակութեան ղեկավար Եղիշ Դաւթեանը, մրցումներին մասնակցում էին 44 երկրների ներկայացուցիչներ, ընդ որում ԱՊՀ-ից միայն Հայաստանը (4 մարզաձեւում): Ճիւղոյիստ Համբարձում Տօնոյեանը (66 կգ) գրաւեց 2-րդ տեղը եւ արժանացաւ արծաթէ պարգևի: Իսկ աթլետների մրցաշարի 400 մետր վազքատարածութիւնում Արամ Դաւթեանը (Արտաշատ) գրաւեց 6-րդ պատուաւոր տեղը:

## ԹՈՒՐՔԻԱՆ ՍՏԱՅԱԲ, ԻՆՉ ԻՐԵՆ ՊԷՏՔ ԵՐ

Շարունակուած էջ 5-էն

խանութիւնը պահպանելու նպատակով ենթարկուել միջազգային ճնշումներին:

Սակայն Սերժ Սարգսեանն իր ուղերձում յայտարարեց, թէ ինքը երբեք չի գնայ միակողմանի գիշումների, որ նախապայմաններ չկան արձանագրութիւններում, որ ԼՂ խնդիրը չի շղկապուում հայ-թուրքական յարաբերութիւնների հետ: Իսկ մէկ այլ առիթով էլ նա յայտարարել էր, թէ ինքը մէկ-մէկ մենակ մնալուց քահ-քահ ծիծաղում է, երբ մտաբերում է, որ իրեն մեղադրում են Ղարաբաղը ծախելու մէջ:

Եթէ երկու կարեւորագոյն հարցում մենք արդէն տեսնում ենք, որ իշխանութիւնները ստում են, ի՞նչ երաշխիք ունենք, որ ԼՂ հարցի հետ կապուած իրենց պնդումներում էլ չեն ստում: Եթէ նրանք չեն արձանագրում առաջընթաց Ղարաբաղի հարցում, այլընտրանքը լինելու է փակ սահմանները: Իսկ այստեղ ձախողումը լինելու է կատարելալ: Ցեղասպանութեան հարցի վերաբերեալ Թուրքիան ստացել է այն, ինչ իրեն պէտք էր, եւ անկախ վաւերացնելու հանգամանքից, Թուրքիան իր նպատակին հասել է. Ցեղասպանութեան ճանաչման կասեցումը կայացած փաստ է: Իսկ եթէ ՀՀ-ն չգնայ ԼՂ խնդրի կարգաւորմանը, ունենալու է փակ սահմաններ:

Այս ընթացքում ԳՅԴ-ն էր բաւական արմատական կեցուածք ընդունել, 12 կուսակցութիւններ համատեղ յայտարարութեամբ հանդէս եկան, միաւորում են կազմաւորում: Սիւզիէն Դայ ազգային կոնգրեսը կարծես թէ պասիւ է, աւելի՛ն, Կոնգրեսին մեղադրում են իշխանութիւնը:

Անրի հետ Գոյնակարծիք լինելու մէջ: Ինչո՞ւ Կոնգրեսն էլ ԳՅԴ-ի ԳմԱԼ լայնածաւալ բողոքի ակցիաներ չարեց:

Լեւոն Տէր-Պետրոսեանը Սեպտեմբերի 18-ի իր ելույթում յայտարարեց, որ ասպարէզը ժամանակաւորապէս թողնում է քաղաքական այլ ուժերին: Երկու տարի այս վտանգաւոր զարգացումների դէմ պայքարելուց յետոյ արձանագրում ենք, որ Կոնգրեսը միայնակ չի կարող կատարել ուժեղ միտապլանային գործընթացը: Ուրեմն՝ այսօր մենք պէտք է տեսնենք՝ արդեօք հայ հասարակութիւնը, այլ քաղաքական ուժեր պատրաստուած են ընդվզել այս գործընթացների դէմ, արդեօք պատրաստուած են պահանջել Սերժ Սարգսեանի հրաժարականը: Երբ այն ուժերը, որոնք սատարում էին Սերժ Սարգսեանին, սկսեն պահանջել նրա հրաժարականը, այդ դէպքում հնարաւոր է համաժողովրդական ընդվզման ալիքով հասնել այդ նպատակին: Հիմա մենք տեսնում ենք, որ որոշակի ակտիւացում ու գործընթաց գնում է այդ ուղղութեամբ: Դեռեւս հրաժարականի պահանջին չեն հասել, սակայն հնչում են խոստումներ ու սպառնալիքներ, որ Սերժ Սարգսեանի կողմից ստորագրելու դէպքում նրանք պատրաստ կը լինեն նրա հրաժարականը եւս պահանջել: Սա գործընթաց է, որի սկիզբը մենք ենք դրել: Եւ երբ տեսնում ենք, որ սկսում է իրական պայքար ուժեղ մի դէմ, ապա այդ դէպքում մենք կ'ողջունենք, եւ այդ դէպքում մեր հռչակած նպատակի իրագործումը հնարաւոր կը դառնայ:

Հարցազրոյցը վարեց ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԵԱՆԸ

## ՔԱՉ ՆԱԶԱՐ

### ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան

ժամը 10:00-ից 12:30

Կլէմտէյի 280-րդ կայանից



### ԹՐԻՓՈԼՑԻ ՀՆՉԱԿԵԱՆ ՀՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հրայրի մահուան գուժը իմացալ խոր ցաւով:

Հօրս մեր ընտանիքին, լաւագոյն ընկերն ու բարեկամն էր Հրայրը:

Որպէս պատանի, ես եւ ինծի պէս տասնեակ պատանիներ, Հրայրի առաջնորդութեամբ, ՀՄՄ-ականներ դարձանք Թրիփոլի մէջ:

1960-ական թուականներուն, Հրայրը, իր սեփական ծախսերով կը հոգար ՀՄՄ Թրիփոլի մասնակցութիւնը, Զատիկուայ օրերուն Պէյրութի Սահակեան դաշտին վրայ տեղի ունեցող ՀՄՄ-ի Միջ-մասնաճիւղային խաղերուն:

Յիշատակելի են, այդ օրերուն, ՀՄՄ Թրիփոլի կազմին օթօպիւսով Թրիփոլիէն-Պէյրութ մեր ճամբորդութիւնները, երբ Հրայրի առաջնորդութեամբ, դեկավարութեամբ եւ խմբավարութեամբ, Հնչակեան յեղափոխական երգեր երգելով կը խանդավառուէինք:

Հրայրը, տեղուցն Ֆրէյնբերու դպրոցը աւարտած ըլլալով, տիրապետած էր Ֆրանսերէն եւ Արաբերէն լեզուներուն, եւ ինքնաշխատութեամբ, քաջածանօթ դարձած էր նաեւ Հայերէն լեզուին, Հայոց Պատմութեան եւ Գրականութեան:

Բայց Հրայրը ամենէն աւելի եւ ամենէն առաջ, ըմբոստ նկարագրի եւ իսկական յեղափոխականի տիպարն էր որ չէր հանդուրժեր որեւէ քծնանքի:

Զինուոր չէր եղած երբեք, սակայն որեւէ գինուորէ աւելի գինուոր էր իր քաջութեամբ եւ խիզախութեամբ:

Նախկին նախագահ Սուլէյման Ֆրանսիէի մօտ առանց ժամադրութեան այցելութիւն տուող անձն էր Հրայրը, որուն հետ տարիներու բարեկամութիւն մշակած էր:

Ան մտերիմ բարեկամն էր նաեւ շատ մը Թրիփոլցի ազդեցիկ ընտանիքներու որոնց գաւակներուն հետ ան ընկերացած էր որպէս դասընկեր Ֆրէյնբերու դպրոց ժամանած շրջանին:

Հրայրի այդպիսի ընկերներէն մէկն էր Ֆարուք Մոքատտէմը, որ 1975-ին սկսած Լիբանանի քաղաքացիական պատերազմի սկզբնաւորութեան դարձած էր Թրիփոլի ամենէն ազդեցիկ ղեկավարը:

Հրայրը, Մոքատտէմի միջոցաւ, ապահովեց այն ատեն Թրիփոլիի հայ համայնքի ապահովութիւնը եւ շատ անգամ ալ յաջողեցաւ փրկել հայ առեւանգուած երիտասարդներու կեանքը:

Հրայրը, հօրս հետ միասին, Թրիփոլիի մէջ Հնչակեան կառուցի հաստատուն երկու սիւներն էին:

Հրայրը, Բիւզանդ եւ Արմենակ Ծաննագեան եղբայրներու պէս, եւ եղբօրս՝ Վահան Դաւիթեանի պէս, կտրիճ եւ անվախ ՀՄՄ-ականներ դաստիարակած ուսուցիչ եւ առաջնորդ եղած է:

Հրայրը կը պատկանի փաղանքին այն մարդոց որ իրենց դրոշմը կը թողուն վրադ առաջին հանդիպումին իսկ: Այս մէկը կրնան

վկայել բոլոր գինք ճանչցողները, մանաւանդ Պէյրութի գաղափարակիր իր բազմաթիւ ընկերները:

Սակայն աւաղ, ցաւով իմացայ որ Հրայրի թաղումը եղած է անշուք եւ ոչ վայել Հրայրի պէս արժանեալի մը:

Հնչակեան դրօշով անոր դագաղը չէ փաթեթուած եւ ոչ ալ Հնչակեան քայլերգով մարմինը հողին յանձնուած:

Կըսուի թէ Թրիփոլիի հայութեան թիւի պակասն ու այդտեղի Հնչակեաններու արտագաղթը, ինչպէս նաեւ Երեւանի մէջ գումարուած Հնչակեան Համագումարին Պէյրութէն մեկնած պատգամաւորներու բացակայութիւնը պատճառ դարձած են, որ Հրայրի պէս Հնչակեանի մը թաղումը ըլլայ անշուք:

Հրայրը որ ամբողջ հոգով եւ սիրտով իր կեանքը փաթեթեց Հնչակեան դրօշի ծառայութեամբ, արժանի էր եւ ալ իրաւունքն էր որ իր դագաղը Հնչակեան դրօշով փաթեթուէր, եւ մարմինն ալ Հնչակեան քայլերգով հողին յանձնուէր Արժանաւորները սակայն, չես գիտեր ինչու, յաճախ անշուք կը մեկնին ու կը հեռանան մեզմէ:

Հրայրն ալ այդպէս, արժանաւոր ՄԱՐԳԻՆՆՈՒ ՀՆՉԱԿԵԱՆ, անշուք մեկնեցաւ:

Հեռաձայնի վրայ իմացայ Հրայրի կնոջ Սոնիայէն, թէ Հրայրի վերջին արտասանած բառերը եղած են, Եղիա, Եղիա..... (հօրս անունը):

Ով սիրելի եւ համբուրելի Հրայր, դուն ալ գացիր միանալու հօրս եւ եղբօրս մօտ ուր արժանապէս անոնց հետ այժմ կը հանգչիս Հնչակեան մեծ ընտանիքի դամբանատան մէջ:

Կը ցաւիմ որ ճակատագրիս ցաւալի տնօրինութեամբ հեռացած ըլլալով սիրելի Լիբանանէս, «մահ-ըրում» մնացի քեզի հետ աւելի ժամանակ անցնելէ եւ ջերմ ներկայութիւնդ աւելի երկար տարիներ վայելելէ:

Միակ միութարութիւնս այն է որ անցեալ Նոյեմբերին, գրեթէ տարի մը առաջ, երբ Լիբանան այցելեցի, հետոյ եղայ քանի մը օր մեր հասարակաց ընկեր Զաւէնին հետ, եւ այն ատեն հպարտ ճակատդ համբուրելով հօրս հոտը առի:

Զեմ գիտեր ինչը մղեց ինծի ըսելու հրաժեշտի պահուն թէ, Հրայր, առողջ մնացիր մինչեւ յաջորդ ամառ իմ վերատին այցելութեան: Ախ լեզուս չորնար եւ այդ բանը չըսէի.....:

Զգեցիս քանի մը շաբաթ ետք իմացայ որ անիծեալ քաղցկեղը սեղմած էր կոկորդը

Եւ ..... սրիկան թոյլ չտուաւ: Իմացայ որ շատ տառապեցար եւ թէ վերջին օրերդ քուն չճանչցար ու չարչարուեցար:

Հիմա ալ հանգիստ ըրէ, սիրելի Հրայր: Դուն հեռացար, բայց երբեք չմեռար:

Մեքք Պարգեւ Դաւիթեան Թոքոնթօ

### ՄԻՋ- ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԱԲ

Շաբուա կուած էջ 5-էն

Անհասկնալի է թէ ինչպէս առանց Սփիւռքահայութեան հետ խորհրդակցելու, Հայաստանի ոեւէ իշխանութիւն կարող է նման հարց քննարկել կամ արծարծել:

Յարաբերութիւններու բնականոնացումը Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ կարելի չէ առանց ցեղասպանութեան ճանաչման եւ հատուցումներու, ինչ ալ ընեն Հայաստանի իշխանութիւնները:

Հայաստանի հանրապետութիւնը Թուրքիոյ հետ յարաբերութիւններ հաստատելով չի կրնար անտեսել պատմութեան դառն փորձը:

Մեկնելով այս իրողութենէն, Հնչակեան կուսակցութիւնը

- կը մերժէ Թուրքիոյ հետ ներկայ սահմանները ընդունող որեւէ արձանագրութիւն կամ ճանաչում:

- Կը մերժէ թուրքական ուլտրազաւթի եւ խեղաթիւրիչ պատմագրութեան ներկայացուցիչներուն հետ Հայ եւ Թուրք պատմաբաններէ բաղկացած յանձնաժողովի կազմութեան գաղափարը:

- Կը մերժէ Լեռնային Ղարաբաղի կարգաւորման որեւէ գործընթաց որ չճանչնար անոր անկախութիւնն ու գերիշխանութիւնը:

Հնչակեան կուսակցութիւնը կը հաւատայ որ Հայաստան-Թուրքիա միջ-պետական յարաբերութիւններու նախաքայլը պէտք է ըլլայ պատմութեան եւ մարդկութեան առջեւ Թուրքիոյ կողմէ պատասխանատուութիւն ընդունելն ու հաշիւ տալու պատրաստակամութիւնը:

Հնչակեան կուսակցութիւնը կը հաւատայ, որ սփիւռքը հետեւանք է Թուրքական իշխանութիւններու ծրագրած եւ գործադրած ցեղասպանութեան: Հետեւաբար, համայն Հայութիւնը կը մնայ պահանջատէր իր դերին մէջ եւ պիտի շարունակէ հետապնդել Հայոց Ցեղասպանութեան ճանաչումի եւ բռնագրաւուած հողերու եւ իրաւունքներու ձեռքբերումը,

### «ԳՈՅՈՒԹԻՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ» ԳԻՆԸ

Շաբուա կուած էջ 6-էն

ները, տարածաշրջանի բոլոր երկրները կարող են փոխշահաւէտ համագործակցութիւն ծաւալել: Սակայն ճիշտ է նաեւ, որ քանի դեռ մեր հողերը գրաւուած են, Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ անհնար է որեւէ համագործակցութիւն»,- ասել է Ատրպէյճանի նախագահ Աբդուլլահ Գիլը, իր հերթին, ասաց.

«Մենք մեծապէս կարեւորում ենք Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը եւ միշտ կը լինենք նրա կողքին: Մենք յուսով ենք եւ հաւատում ենք, որ Ատրպէյճանի տարածքները շուտով կ'ազատագրուեն: Դա արդար որոշում կը լինի՝ յանուն տարածաշրջանում խաղաղութիւն եւ կայունութիւն

անկախ այն բանէն թէ ինչպիսի յարաբերութիւններ կը մշակուին կամ կը զարգանան Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ, Երէկ Սերժ Սարգսեանը, հեռատեսիլով Հայութեան ուղղած իր խօսքին մէջ, ըսաւ թէ որեւէ զիջում կատարուած չէ Թուրքական կողմին:

Կ'ուզենք հաւատալ որ այդպէս է իրականութիւնը, որովհետեւ կարելի չէ երեւակայել որ ոեւէ հայ զիջի Հայոց ցեղասպանութեան նկատմամբ:

Կ'ուզենք հաւատալ իրեն որպէսզի Հայաստան-Սփիւռք կամուրջը, քաւ լիցի, չքանդի եւ երկուքին միջեւ ճեղք չբացուի:

Կ'ուզենք հաւատալ որ անտեսուած չեն հայրենիքի եւ սփիւռքի ամէն կողմերէ ելած բողոքի ձայներն ու կանչերը արձանագրութիւններուն դէմ որ կ'ըսեն.

Ո՛չ Ծիծեռնակաբերդի բարձունքէն.

Ո՛չ Սփիւռքի սիրտ Պէյրութէն.

Ո՛չ Փարիզէն, Նիւ-Եորքէն, եւ հայահոծ Լոս Անճելըսէն.

Սիրելի ներկաներ, Բողոքեցէ՛ք Հայոց Ցեղասպանութիւնը մրտող արձանագրութիւններուն դէմ:

Բողոքեցէ՛ք այն հայրերուն համար որ անապատներ քշուեցան եւ նահատակուեցան.

Բողոքեցէ՛ք այն մայրերուն համար որ իրենց անօթի եւ ծարաւ գաւակներուն անթաղ մարմինները տեսնելով խելագարուեցան ու մահացան.

Բողոքեցէ՛ք այն մանուկներուն համար որ Քրիստոսի չափ անմեղ էին երբ խոշտանգուեցան.

Բողոքեցէ՛ք որպէսզի որեւէ իշխանաւոր չչանդգնի մեր սրբութեանց հաւատամքը արատաւորել, մեր ցեղասպանութիւնը անտեսել եւ մեր պապենական հողերու վերադարձի իրաւունքը սակարկութեան դնել:

Բողոքեցէ՛ք, եւ եթէ հարկ է, հայրենի ժողովուրդին հետ միացած ու եղբայրացած այս իշխանութիւնը եկէ՛ք միասին տապալենք:

հաստատելու: Թուրքիան ամէն կերպ կ'աջակցի այդ հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը եւ խաղաղութեան հաստատմանը կովկասում: Սակայն դրա առաջին եւ գլխաւոր քայլը, անկասկած, պէտք է լինի Ատրպէյճանի գրաւեալ տարածքների ազատագրումը»,- ամփոփել է Գիլը:

Այսպիսով, մինչ Հայաստանի նախագահը Հայաստանից հագարաւոր մղոն հեռաւորութեան վրայ փորձում էր բացատրել ու համոզել սփիւռքի իր հայրենակիցներին, որ նախատորազրուած արձանագրութիւններում թրքական նախապայմաններ չկան, նրա թուրք պաշտօնակիցը Հայաստանի մայրաքաղաքից ընդամէնը 100 կմ հարաւ բարձրաձայնում էր «գոյութիւն չունեցող» թրքական նախապայմանները:

ArmenienInfo.net  
News. Informationen. Kommentare.

www.massisweekly.com  
Updated every Friday





"Քաջ Նազար" հանդեսը եւ հեռուստաժամը  
Ներկայացնում է

# 10-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ

Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԲԻՄՆԱԴՐԱՄԻ,  
ԲԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲԱՇՄԱՆՂԱՄ  
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ  
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԲԱՍԱՐ  
(հիմնադ 1999թ.)

**Կիրակի, Նոյեմբեր 1, 2009**  
**Երեկոեան ժամ 4-12-ը**

Sponsored by

"**KACH NAZAR**" Magazine & TV Show

**10 ANNIVERSARY**

NATIONWIDE **TELETHON**

**ON SUNDAY**  
**NOVEMBER 1, 2009**

to Benefit **CHRISTMAS FUND FOR ARMENIAN ORPHANS**  
and **DISABLED CHILDREN**  
and The **RESTORATION OF CHILDREN'S HOMES (Est. 1999)**

**ՕԳՆԵՆՔ ՄԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՆՐԱՆՑ**  
**ԱՊԱԳԱՆ ԿԵՐՏԵԼՈՒ ԲԱՍԱՐ**

**HELP OUR CHILDREN TO BUILD THEIR FUTURE . . .**

**AMGA**  
**CHANNEL 280**  
Glendale, CA  
**From 4:00 pm**  
**12midnight**

**P.O. BOX 250038 • GLENDALE, CA 91225**  
**Tel: 818-246-0125 • 818-239-6880 or 818-606-2070**  
**TAX ID # EIN 26-3208049**  
**E-mail: forourkids99@gamil.com**

